
ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՅՐՈՆԻ ԵՎ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ

Ջորջ Գորդոն Լոել Բայրոնի (1788–1824) հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին անդրադարձել են ոչ միայն Մխիթարյաններն ու մյուս հայ բանասերները, այլև բանաստեղծի համերկրացիներ, օտարազգի շատ հեղինակներ (նույնիսկ սովորական զբոսաշրջիկներ): Այդ առնչություններին օտարազգի հեղինակներն անդրադարձել են ինչպես իրենց առանձին աշխատություններում, այնպես էլ պարբերական մամուլում (թե հայ, թե օտար) տպագրված հոդվածներում: Ստորև ժամանակագրական կարգով, առանձին-առանձին կանդրադառնանք միայն հետաքրքրական որոշ հրատարակումների, որոնք ընդգծում են Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների հիմնական եզրերը:

1. ԳՐՔԵՐ ՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին անդրադարձել է Ջ. Ջեֆրսոնը «Լորդ Բայրոնը ինչպիսին որ կա» հանրահայտ եռահատոր աշխատության մեջ: Նա գրում է. «Միաժամանակ նա (Բայրոնը – Ա. Բ.) իր ուշադրության շեղման արժանվույն բնագավառ գտավ Ս. Ղազար վանքում, ուր ամեն օր իր մակույկով գնում էր գրուցելու վանականների հետ և օգնելու նրանց անզլերեն-հայերեն քերականության ստեղծման գործում, որի հրատարակման համար նա նվիրաբերել էր հազար ֆրանկ»¹:

Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին բազմիցս անդրադարձել են ռուս անվանի գրաքննադատներ, հայր և որդի Վեսելովսկիները: Մոսկվայի համալսարանի և Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, պատմահամեմատական գրականագիտության կարկառուն ներկայացուցիչ Ալեքսեյ Վեսելովսկու (1843–1918) գիտական ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են արևմտաեվրոպական գրականության պատմությանը: 1889-ին Վեսելովսկիների ընտանիքի ուղևորությունը Վենետիկ և այցելությունը Ս. Ղազար կղզի առիթ հանդիսացան ոչ միայն որդու (որը այդ ժամանակ ընդամենը տասնյոթ տարեկան էր և գիմնազիայի յոթերորդ դասարանի շրջանավարտ), այլև հոր համար. նրանք բազմաթիվ ջերմ տողեր են նվիրել Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին: Ա. Վեսելովսկու «Բայրոնը Վենետիկում» հոդվածն առաջին

¹ J. C. J e a f f r e s o n. The Real Lord Byron. New Views of the Poet's Life, in three volumes, vol. II. Leipzig, Bernhard Tauchnitz, 1883, p. 203.

անգամ լույս է տեսնում “Вестник Европы” ամսագրում², իսկ հետագայում որպես առանձին գրուխ գետեղվում է հեղինակի «Բայրոն» մենագրության մեջ³: Նկարագրելով Բայրոնի այցելությունը Ս. Ղազար կղզի՝ Ա. Վեսելովսկին նկատում է, որ դրանով «ես մի արտասովոր ցայտերանգություն ավելացավ նրա բարդ հոգեկան կյանքում»⁴: Այնուհետև հեղինակն անդրադառնում է այդ «էկզոտիկ հայկական անկյունով» Բայրոնի հրապուրվելուն, այնտեղ անցկացրած օրերին, նրա և Մխիթարյան հայրերի մտերմության ու համագործակցության հարցերին: Իսկ Ա. Վեսելովսկու որդու՝ ռուս անվանի գրաքննադատ և հայագետ, բազմաթիվ հայագիտական աշխատությունների հեղինակ Յուրի Վեսելովսկու (1872–1919), առաջին արտասահմանյան ուղևորության տպավորությունները տեղ են գտել «Բայրոնը Ս. Ղազար կղզում»⁵ ակնարկում, որն այլ ակնարկների հետ հետագայում ամփոփվել է հեղինակի «Գրական ակնարկներ» գրքում⁶: Այստեղ, ինչպես Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին անդրադարձող այլ հեղինակներ, նա ևս, խոսելով, Ս. Ղազար վանքի մասին՝ նշում է, որ «այն չի ծառայում որպես կրոնական կամ լուսավորական կենտրոն իտալական ժողովրդի համար. ո՞հ, դա տարաշխարհիկ ժողովրդի մի յուրահատուկ գաղութ է, ինչ-որ հրաշքով իտալական միջավայր տեղափոխված հենավոր արևելքի մի անկյուն, դա իր լուսավորական գործունեությամբ հայտնի հայ-մխիթարյանների վանքն է»⁷: Այնուհետև Յու. Վեսելովսկին խոսում է Բայրոնի Ս. Ղազար կղզի առաջին այցելության, կղզու բնակիչների հետ նրա առաջին ծանոթության, հայերենի առաջին դասերի, բանաստեղծի և Ավգերյանի բարեկամական հարաբերությունների մասին, ինչպես նաև նկարագրում է Մխիթարյանների կողմից Բայրոնին հատկացված աշխատասենյակը, որտեղ բանաստեղծը ոչ միայն հայերենի դասեր է առել Հարություն Ավգերյանից, նամակներ գրել իր ընկերներին, այլև այստեղ է «կազմվել և այն առաջին բանասիրական աշխատությունը, որին մասնակցել են ն՝ Ավգերյանը, և՛ Բայրոնը. դա անգլերեն քերականությունն էր հայերի համար»⁸: Ապա հեղինակն ավելացնում է, որ այս սենյակում է բանաստեղծը գրել վերոհիշյալ քերականության համար նախատեսված հայտնի առաջաբանը, հայերենից թարգմանել կորնթացիներին ուղղված ու Պոդոսի թղթերը, ինչպես նաև այլ գործեր: Յու. Վեսելովսկին մեծ ակնածանքով է խոսում վանքի հարուստ գրադարանի, այնտեղ պահվող գրքերի մասին, որոնք վանականների ջանքերով ձեռք են բերվել մի ամ-

² А. Веселовский. Байрон в Венеции. – “Вестник Европы”. Т. 2, кн. 4, 1901, с. 645–691.

³ А. Веселовский. Байрон: биографический очерк. М., 1914.

⁴ Նույն տեղում, էջ 188:

⁵ Ю. Веселовский. Байрон на острове св. Лазаря. – “Семья”, 1893, № 54, с. 2–4; № 55, с. 2–4. Այս ակնարկը հայերեն (թարգմ. Հ. Մելքոնյանց) «Բայրոնը Մխիթարյանների մոտ» վերտառությամբ լույս է տեսնում Մոսկվայում հրատարակվող «Հանդես գրականական և պատմական» տարեգրքի 1894-ի համարում (հինգերորդ գիրք, էջ 158–174), որտեղ թարգմանիչը ոչ միայն փոխել է հոդվածի վերնագիրը, այլև թույլ է տվել անձտությունն հեղինակի անվան հարցում՝ Յուրի Վեսելովսկու փոխարեն նշելով Գեորգ Վեսելովսկի:

⁶ Ю. Веселовский. Литературные очерки. М., 1900, с. 214–225.

⁷ Նույն տեղում, էջ 215:

⁸ Նույն տեղում, էջ 218:

բողջ դարի ընթացքում: Բայրոնի և Ավգերյանի գրույցները մեծ հետաքրքրություն են առաջացնում բանաստեղծի մեջ հայ ազգի նկատմամբ, որի լուսավորությանը, մշակույթի պահպանմանն ու զարգացմանն են ծառայում Մխիթարյանները. «Բայրոնը ազահոությամբ լսում է ծերունու խոսքերը, և նրան թվում է, թե իրեն վաղուց է ծանոթ ու մերձավոր այդ հեռավոր երկիրը, որի մասին նրան պատմում է ծերունին, այն երկիրը, որտեղ հնադարյան ավերակները պահպանում են անցյալի փառքի և կորուսյալ երջանկության վեհաքանչ պատմությունը»⁹: Հետագայում Յու. Վեսելովսկու այս ակնարկը զետեղվել է նաև նրա երկերի «Հայ գրականության, պատմության և մշակույթի ուրվագծերը» ժողովածուում¹⁰:

Ֆրանսիացի գրող Անդրե Մորուան գրում է. «...ամեն օր Բայրոնն իր գոնդոլն էր կանգնեցնում հայկական վանքի մոտ: Գապվել էր հոգևոր հայրերին և սիրում էր այցելել նոճիներով, Հուդայի ծառերով և նարնջենիներով կանաչապատված նրանց փոքրիկ կղզին: Անցնելով ծաղկավետ ճեմեյիքով, մտնում էր ամբողջովին սրբապատկերներով զարդարված մի սենյակ, ուր օգնում էր հայր Պասկալ Ավգերին»¹¹ պատրաստելու Անգլերեն-հայերեն մի քերականություն¹²: Այստեղ խոսքը վերաբերում է Հ. Ավգերյանի և Բայրոնի միացյալ ջանքերով 1817-ին հրատարակված «Անգլերեն-հայերեն քերականության» ձեռնարկին՝ հայերի օգտագործման համար: 1939-ին «Բազմավեպում» արտատպվում է Ա. Մորուայի՝ Բայրոնին նվիրված վեպից մի հատված¹³, որտեղ հեղինակը նկարագրում է Բայրոնի այցը Մխիթարյան միաբանություն, Ս. Ղազար կղզու գեղեցկությունը, Հ. Ավգերյանի օգնությամբ Բայրոնի հայերեն սովորելը և «Անգլերեն-հայերեն քերականության» ձեռնարկի վրա նրանց համատեղ աշխատանքը: Բացի դրանից, բերված է նաև Ա. Մորուայի վեպի այն հատվածը, որտեղ նշվում է, որ «Մանֆրեդի» երրորդ արարի մի տեսարան «արձագանգն էր Բայրոնի և հայ Վարդապետներուն միջև տեղի ունեցած խոսակցությանը»:

Իսկ ռուս անվանի գրող Անատոլի Վինոգրադովի նկարագրմամբ՝ «...մակույկավար Տիտոն տարել է նրան (Բայրոնին – Ա. Բ.) Ս. Ղազար կղզի, որտեղ ծառերով ստվերապատված ոչ մեծ խուլք կազմող շենքերի մեջ երևում էին ոսկեգոծված խաչերով զմբեթները և զանգակատները: Դա գիտնական վանականների, Հայաստանի վտարանդիների, այսպես կոչված, «մխիթարյանների» ապաստանն էր: Ի տարբերություն այն ժամանակվա վենետիկյան վանքերի, որոնք Վենետիկի բարձրաշխարհիկ երիտասարդությանը գրավում էին որպես զվարճության բազմապիսի արգելված ձևերի տեղեր, վենետիկյան այդ փոքրիկ

⁹ Նույն տեղում, էջ 225:

¹⁰ Ю. В е с е л о в с к и й. Очерки армянской литературы, истории и культуры. Ереван, 1972, с. 391-402.

¹¹ Խոսքը Հարություն Ավգերյանի մասին է:

¹² Ա. Մ ո Ր Ո Ւ Ա. Դոն Ժուան կամ Բայրոնի կյանքը, ֆրանսերենից թարգմանեց Աբրահամ Ալիբյանը, Երևան, 1980, էջ 324, А. М а у р о і s. Byron. Т. II, Paris, 1930, p. 118.

¹³ Ա. Մ ո Ր Ո Ւ Ա. Բայրոնի և Ս. Ղազարու մասին, թարգմ. Հ. Ք.– «Բազմավեպ», 1939, №1-2, էջ 34:

վանքը հայկական անկախության քողարկված ղեկավար կենտրոն էր»¹⁴։ Բհարկե, այդ խոսքերը մի փոքր չափազանցված են և գեղարվեստորեն ազատ արտահայտվելու արդյունք, սակայն հեռու չեն ճշմարտացիությունից, քանի որ XVIII դ. սկզբներին, երբ հայերը տառապում էին մի կողմից սուլթանական Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ շահական Պարսկաստանի լծի տակ, Վենետիկից ոչ հեռու գտնվող Ս. Ղազար փոքրիկ կղզին թերևս միակ վայրն էր աշխարհում, որտեղ ազատ ու անկաշկանդ հնչում էր հայոց լեզուն և հանգամանորեն ուսումնասիրվում հայ հինավուրց մշակույթն ու ստվարածավալ գրականությունը։

Մխիթարյան միաբանությունում Բայրոնի հայերեն սովորելուն անդրադարձել է նաև ռուս անվանի գրաքննադատ Վիկտոր Ժիրմունսկին իր «Արևմտակարգական գրականությունների պատմությունից» ժողովածուում գետեղված «Բայրոն» հոդվածում. «...վենետիկյան տոնախմբության զվարճությունների միջև ընկած ժամանակամիջոցում Ս. Ղազար հայկական վանքի վանականների մոտ ուսումնասիրում է հայոց լեզուն՝ երազելով խորամուխ լինել արևելյան պոեզիայի գաղտնիքների մեջ, և իր նոր բարեկամների կողմից հրատարակված հայերեն քերականության առաջաբանում բացեիբաց արտահայտում է իր համակրանքը թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրության գործին»¹⁵։

Ամերիկացի ժամանակակից ակնավոր գրող Իրվինգ Ուոլլեսն առաջին անգամ Ս. Ղազար է այցելել 1964-ին։ Այդ այցելության մասին որոշ տեղեկություններ կարելի է քաղել 1974-ին «Հայ ընտանիք» ամսագրում գետեղված Զ. Լ. Լոնյանի հոդվածից, որը Բ. Ուոլլեսի Ս. Ղազար կատարած հերթական այցելության մասին է (գրողի այցի վերաբերյալ որոշ տեղեկություններ հանդեսում հակիրճ ներկայացվել են նաև անգլերենով), ինչպես նաև հոդվածագրի հարցազրույցից գրողի հետ (անգլերեն և հայերեն)¹⁶։ Ինչպես նշում է ինքը՝ գրողը, իր հարցազրույցում, «Կը փափաքեի ճանչնալ վանականներու այս փոքրիկ խումբը, նաև անոր համար որ Բայրոնյան հրատարակություններու և նկարներու մեծ հավաքածու մը ունիմ։ Օր մը կնոջս հետ որոշեցինք, 1964-ին էր, Ս. Ղազար երթալ։ Ժամադրություն չառինք և վարդապետ մը մեզ առաջնորդեց։ Հետաքրքրված էի իրենց պատմությամբ, թե ինչպես հոս եկած էին, և Հայաստանի մասին»¹⁷։ Այսպիսով, դեռևս մինչև իր առաջին այցելությունը Ս. Ղազար, Բ. Ուոլլեսը, ամենայն հավանականությամբ, որոշ տեղեկություններ ունեցել է Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների մասին։ Իսկ այդ այցելության ընթացքում հայ մշակույթի և հոգևոր կյանքի հինավուրց կենտրոնն այնպիսի խոր տպավորություն ու ազդեցություն են թողել գրողի վրա, որ նա հետագայում իր նշանավոր և ծավալուն ստեղծագործություններից մեկի՝ «Դավր»¹⁸ վե-

¹⁴ А. В и н о г р а д о в. Сборник сочинений в трех томах. Т. III. М., 1988, с. 466.

¹⁵ В. М. Ж и р м у н с к и й. Из истории западно-европейских литератур. Л., 1981, с. 197.

¹⁶ Զ. Լ. Լոնյան. Իրվինգ Ուոլլես Ս. Ղազարի մեջ. – «Հայ ընտանիք», 1974, №11–12, էջ 28–31, An Interview with Irving Wallace for “Hye Endanik” – Հարցազրույց մը Իրվինգ Ուոլլեսի հետ. – Նույն տեղում, էջ 31–35։

¹⁷ Նույն տեղում, էջ 34։

¹⁸ I. W a l l a c e. The Plot. New York, 1968.

պի էջերում զգալի տեղ է հատկացրել Ս. Ղազար կղզուն, Մխիթարյաններին և Բայրոնի՝ այնտեղ անցկացրած օրերին: Իր գրքի առաջին իսկ հրատարակությունից անմիջապես հետո, 1967-ի աշնանը, Ի. Ուոլլեսը անմիջապես «կը փութա Ս. Ղազար գայն անձամբ ձեռնելու Միաբանության Գրադարանին իբրև նշան խոր համակրանքի»¹⁹:

Ի. Ուոլլեսի վեպի գլխավոր հերոսը՝ Մաթ Բրեննանը, դատալսումից, ամուսնալուծությունից, արդարացի վրդովմունքից, հուսահատությունից հետո, դժգոհելով միջավայրից ու շրջապատից, փախուստի է դիմում հայրենիքից և աննպատակ թափառելով Եվրոպայի տարբեր վայրերում, ի վերջո, հայտնվում է Վենետիկում, որտեղ իրեն զգում է պակաս ճնշված, քան որևէ այլ տեղում: Այդ պատճառով էլ մտադրվում է այստեղ մնալ ավելի երկար՝ երեք շաբաթ կամ երեք ամիս, բայց մնում է ավելի քան երեք տարի: Ուշադրությամբ ծանոթանալով արտասովոր քաղաքի պատմությանը՝ Բրեննանը հանդիպում է լորդ Բայրոնի անվանը և անսպասելիորեն իմանում բանաստեղծի՝ Ս. Ղազար կղզու հետ ունեցած առնչության մասին: Որևէ լավ բան անելու ցանկությունից դրդված՝ Բրեննանը այցելում է և առաջին հայացքից սիրահարվում հայկական կղզուն. ձիթենիների պուրակները և նոճիների շարքերը, արտասովոր խաղաղությունը դուրսում են նրան, գրավում նրա անհանգիստ միտքն ու հոգին: Իսկ համեստ, բարյացակամ, նրբակիրթ հոգևորականների ջերմ վերաբերմունքը թեթևացնում է Բրեննանի տանջանքն ու հոգսերը, օգնում նրան, և փոխադարձ հարգանքի վրա հիմնված բարեկամությունը դառնում է հավերժ: Հենց աբբահայրը, մի քանի ամիս անց, Բրեննանին առաջարկում է լինել Ս. Ղազարում ինչպես իր տանը և օգտվել իրեն տրված արտոնություններից՝ զբաղեցնել վերևի հարկի աշխատասենյակն իր ուսումնասիրությունների համար, սենյակ, որտեղից երևում էր Ս. Մարկոսի զանգակատան հեռավոր սրածայր ձողը: Բրեննանը մեծ խանդավառությամբ ընդունում է հրավերը. «Վերջերս ես իմ հետձաշյա ժամանակն անցկացնում եմ մի փոքրիկ կղզում, ծովածոցիկից դուրս, հեռավոր բնակավայր հայ հայրերի համար, որոնք սիրեցին ինձ: Կղզու անունն է Ս. Ղազար»²⁰: Դա Բրեննանի կղզին էր, որտեղ նա աշխատում էր ու խորհում իր ճակատագրի մասին, նրա «հատուկ ապավենը, բայց ոչ միայն նրա ապավենը: Դեռևս նրանից մեկուկես դար առաջ մի ուրիշ արևմտյան վտարանդի, որն ստիպված էր խայտառակ ձևով հեռանալ իր հայրենիքից, հայտնաբերել էր Ս. Ղազարի առափնությունները... Փաստորեն, լորդ Բայրոնն է առաջնորդել Բրեննանին դեպի այդ կղզին՝ նրա ապաստարանը»²¹: Այնուհետև, երբ Բրեննանը կրկին այցելում է Ս. Ղազար, խորհրդածում է և գալիս այն եզրահանգման, որ «այս կղզում իր առաջին հյուրընկալողները եղել են Բայրոնի և Բրրթոնի»²² ստվերները»²³:

¹⁹ Ջ. Լ. և Ն. Յ. Ա. նշվ. հոդվ., էջ 28:

²⁰ I. Wallace. Նշվ. աշխ., էջ 186:

²¹ Նույն տեղում, էջ 200:

²² Ռիչարդ Բրրթոն (1821–1890) – անգլիացի ճանապարհորդ և արևելագետ, մեծ համբավ է ձեռք բերել «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի անգլերեն թարգմանության (16 հատոր, 1885–1888) շնորհիվ:

Ի. Ուոլլեսի վեպում նկարագրվում են նաև Մխիթարյանների Ս. Ղազար կղզում հաստատվելու և Բայրոնի հայերեն սովորելու առանձին դրվագներ: Մեր կարծիքով, վեպի գլխավոր հերոսի՝ Մաթ Բրեննանի նախատիպ հանդիսացել է լորդ Բայրոնը: Չուգահեռներ անցկացնելով նրանց միջև, նկատում ենք, որ երկուսն էլ դժգոհելով ինքնակամ հեռացել են իրենց հայրենիքից, երկուսն էլ երկար դեգերումներից հետո հայտնվել են Վենետիկում, որտեղ ապաստանել են համեմատաբար երկար ժամանակով, չնայած նախօրոք որոշել են երկար չմնալ, երկուսն էլ ծանոթացել և սիրել են Մխիթարյաններին, սիրահարվել Ս. Ղազար կղզուն, նրա ձիթենիներին ու նոճիներին, հաճույքով ու խանդավառությամբ աշխատել են այդտեղ, նույնիսկ Վենետիկում նրանց սիրո առաջին էակները՝ Մարիաննան և Լիզան, եղել են նույն տարիքի...

Ընդհանրապես, Վենետիկը՝ իր եզակի և դյուրական գեղեցկությամբ, Ուոլլես ամուսինների նախասիրած վայրերից մեկն էր: Եվ 1974-ին, երբ իրենց արձակուրդներն էին անցկացնում Վենետիկում, կրկին այցելում են Ս. Ղազար, որտեղ Մխիթարյանները տեղեկանում են, որ Ի. Ուոլլեսը «կը մշակե ծրագիրը վեպի մը, որուն մեջ գործողության գլխավոր կերտներեն մեկը պիտի ըլլա Ս. Ղազար»²⁴: Այդ այցելության նպատակն էր նաև նախնական նյութ հավաքել վերոհիշյալ ծրագրի իրականացման համար: Նրանք Ս. Ղազար են ժամանում 1974-ի հուլիսի 25-ին՝ կեսօրից հետո, որտեղ նրանց վանքի քարափի մոտ ջերմորեն դիմավորում են միաբանության հայրերը՝ աբբահայր Հ. Սերոբե Վրդ. Ազրյանի գլխավորությամբ, իսկ Ի. Ուոլլեսը «իդ տաք ու անմիջական ողջույնով ... արդեն զգացուց թե իրեն համար օտար միջավայր մը չէ Ս. Ղազար»²⁵: Վանք այցելելու ժամանակ Ի. Ուոլլեսը հետաքրքրությամբ կանգ է առնում ամեն մի աննշան թվացող մանրուքի առջև, կարծես թե առաջին անգամ էր տեսնում, կատարում է գրառումներ, կրկնել է տալիս բացատրությունները, չի ուզում աննկատ թողնել վանքի պատմական ու մշակութային հարստություններին վերաբերող որևէ նրբություն: Հատկապես մեծ ուշադրություն է հատկացնում այն սենյակին, «ուր ավելի քան դար մը առաջ հայերեն սերտած ու սորված էր մեծ քերթողը լորդ Բայրոն, որուն անունը անբաժանելիորեն կապված է Ս. Ղազարի, և որուն դիմանկարը մնայուն զարդն է՝ Ս. Ղազարի իր աշխատասենյակին: Եվ հանկարծ կը բացազանչե ... «Անկասկած աշխարհի ամենն խաղաղ և ամենն հրապուրիչ անկյուններեն մեկն է Ս. Ղազար»: Եվ ... կը փափաքի ձիթենիի ոստով մը հրաժեշտ առնել վանքեն, փրցված այն բլուրեն՝ ուր լորդ Բայրոն կը սիրեր հանձնվիլ բանաստեղծական ներշնչումներուն գիրկը...»²⁶: Գրողը հողվածագրի միջոցով Մխիթարյաններին է նվիրում իր մասին լույս տեսած Ջոն Լիվրենսի «Իրվինգ Ուոլլես. գրողի դիմանկարը» նորագույն հատորը՝ զգայուն ընծայական հետևյալ մակագրությամբ. «Ս. Ղազար կղզիին բարի Հայրերուն, մասնավոր շնորհակալությամբ Աթոռակալ Հ. Սերոբեի, իրենց ջերմ

²³ I. Wallace. Նշվ. աշխ., էջ 201.

²⁴ Ջ. Լ. և Ն. Յ. Նշվ. հոդվ., էջ 30:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

հյուրասիրության և ընձեռած ազնիվ օժանդակության համար իմ պրպտումներուս՝ իբրև պատրաստություն վեպի մը, որուն մեջ ծրագրած եմ Ս. Ղազարը իբրև ենթահող գործածել»²⁷:

Այնուհետև, Ս. Ղազար երրորդ այցելության հաջորդ օրը՝ 1974-ի հուլիսի 26-ին, Վենետիկում Ջ. Լևոնյանի՝ գրողի հետ կայացած հարցազրույցի ընթացքում Բ. Ուոլլեսը կրկին շեշտում է, որ իր ներկայիս այցը Ս. Ղազարի հետ ավելի մանրամասն ծանոթանալու նպատակ է հետապնդում, «...որպեսզի կարենամ Ս. Ղազարի մասին ավելի մանրամասնորեն գրել: Որովհետև հաջորդ գիրքերես մեկը ... պիտի խոսի Ս. Ղազարի մասին: Գիրքին տիտղոսը պիտի ըլլա՝ «Աղավնիի ծրագիր», խորհրդավոր անուն մը: Այդ գիրքին մեջ Ս. Ղազար գործողության գլխավոր կեղրոններեն մեկը պիտի ըլլա»²⁸: Հարցազրույցի ժամանակ, պատասխանելով «Ձեր նախասիրած հեղինակնե՞րը» հարցին, Բ. Ուոլլեսը առանց երկմտելու պատասխանում է՝ «Անցյալին մեջ՝ ... բանաստեղծներեն Բայրոն»²⁹: Հետևաբար, միանգամայն բնական է և օրինաչափ, որ այնպիսի մի խորաթափանց ու իրատես անձնավորություն, ինչպիսին ամերիկացի մեծանուն գրող Բ. Ուոլլեսն է, որն անցյալի բանաստեղծներից առանձնացնում է միայն Բայրոնին, այդքան մանրագին հետաքրքրվում Ս. Ղազար կղզի, Մխիթարյաններով, նրանց կատարած ազգօգուտ աշխատանքով, Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններով և դրանք գեղարվեստորեն արտացոլում իր ստեղծագործություններում:

Մենք այսքան մանրամասն անդրադարձանք Բ. Ուոլլեսին և նրա «Դավր» վեպին, քանի որ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, դա առաջին դեպքն է, երբ գեղարվեստական ստեղծագործության մեջ արտացոլվում են Մխիթարյանների և Բայրոնի առնչությունների որոշ դրվագներ, իսկ Ս. Ղազար կղզին դառնում է գեղարվեստական երկում նկարագրվող գործողությունների ծավալման վայր:

Անգլիացի հայագետ, Լոնդոնի Կովկասյան ուսումնասիրությունների համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի անցյալին ու ներկային մի շարք աշխատությունների հեղինակ Դեյվիդ Մարշալ Լանգի «Հայաստան. քաղաքակրթության օրրան» աշխատության մեջ նույնպես հանդիպում ենք Մխիթարյան հայրերի գործունեության, Բայրոնի Ս. Ղազար կղզի կատարած այցելության և նրա հայերեն սովորելու մասին տեղեկությունների. «Տասնիններորդ դարում,– գրում է հեղինակը,– լորդ Բայրոնը հայերեն սովորելու նպատակով այցելեց Ս. Ղազար: Մինչև այժմ էլ վանքի այգում, որտեղից տեսանելի է Ս. Մարկոսի տաճարը, պահպանվում է այն քարե սեղանը, որի առջև նա սովորություն ուներ նստելու և խորհելու»³⁰:

²⁷ Նույն տեղում, էջ 31:

²⁸ Հարցազրույց մը Իրվինգ Ուայլքսի հետ, էջ 34:

²⁹ Նույն տեղում, էջ 35:

³⁰ D. M. Lang. Armenia: Cradle of Civilization. London, Boston, Sydney, 1978, p. 277. Դ. Լանգի գրքի ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել որպես «Հին քաղաքակրթությունների առեղծվածները» մատենաշարի առանձին հատոր. Д э в и д Л э н г. Армяне: Народ - созидатель. М., 2004, с. 327.

Իր «Վենետիկ» գրքում Մխիթարյանների և Բայրոնի առնչություններին անդրադարձել է նաև անգլիացի գրող Ջեյմս Մորիսը: Նրա գրքից բավականին ընդարձակ մի հատված 1979-ին արտատպվել է «Հայ ընտանիք» ամսագրում՝ «Սուրբ ջրեր» վերնագրով (անգլերեն)³¹: Այդ հատվածում հեղինակը մանրագնին նկարագրում է Ս. Ղազարը՝ փոքր, բայց բավականին լավ խնամված քաղաքամերձ կղզյակը՝ իր գրավիչ նոճիների պուրակներով, փոքրիկ զանգակատնով, կանաչով պարուրված տաղավարներով և ավելացնում, որ ժամանակին բարձրորդի վիճակում գտնվող այդ անհրապույր ու ամայի կղզին ծաղկունք ապրեց, երբ այնտեղ հաստատվեցին Մխիթարյան հայրերն իրենց Մխիթար Աբբահոր հետ, որոնք Ս. Ղազարը դարձրին հայ մշակույթի, ազգային կրթության և կրոնի երեք գլխավոր կենտրոններից մեկը՝ Վիեննայի ու Էջմիածնի հետ: Վենետիկում, շարունակում է իր միտքը Ջ. Մորիսը, բոլորը ջերմ վերաբերմունք են ցուցաբերել Մխիթարյանների նկատմամբ, և նույնիսկ Նապոլեոնն անձեռնմխելի է թողել Ս. Ղազարի վանքը, այն դեպքում, երբ վերացնում էր մյուս վանքերը: Հեղինակը սիրով ու հիացմունքով է խոսում մայրավանքում պահվող ձեռագրերի և գրքերի հրաշալի հավաքածուի, բազմաթիվ նվերների մասին, որոնք տրվել են Մադրիդի դուքսի, Հռոմի Գրիգոր XVI պապի, իտալացի քանդակագործ Անտոնիո Կանովալի (1757–1822), անգլիացի ճանապարհորդ և գրող Ռիչարդ Բրոքոնի, Վենետիկի պատրիարքի և մյուսների կողմից: Այս ամենը կղզին դարձրել են հազվագյուտ և ընտիր իրերի մի իսկական շտեմարան: «Եվ ամենագլխավորը՝ այստեղ է լորդ Բայրոնը», – ոգևորված գրում է Ջ. Մորիսը, մանրամասնորեն նկարագրում Բայրոնի հայերեն սովորելու ընթացքը և ավելացնում, որ հայ վանականները միշտ հարգանքով են պահպանել Բայրոնի հիշատակը և երբեք չեն թողել, որ այն մարի, և այսօր էլ նրա ոգին, կարծես թե, թնաձում է Ս. Ղազարում. կանգուն է նրա տնկած ծառը, պարտեզում պահպանվել է այն տաղավարը, որտեղ նա նստել, հանգստացել, մտորել և խորհրդածել է, պահվում է այն գրիչը, որով գրել է, կան մի շարք նկարներ, որտեղ պատկերվում է բանաստեղծը և այլն, և այլն: Գրքում բերված է նաև մի հատված Չարլզ Քամելի Մխիթարյան հայրերին նվիրված բանաստեղծությունից, ուր դիմելով նրանց գրում է, որ Բայրոնի «հոգիեն ... կը ժառանգեք մաս մը դուք...»: Բսկ գրքի հեղինակը, իր հերթին, անվերապահորեն համոզված և հավատացած է, որ հայերը դեռ շատ երկար ժամանակ կհիշեն Բայրոնին:

Բացի վերոհիշյալ հեղինակներից, Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև բազմաթիվ այլ օտարերկրացիներ, ինչպես օրինակ՝ Ռոբերտ Քրոզոնն³² ու Ս. Ս. Գրեգորին³³

³¹ Holy Waters (James Morris, Venice. London, 1974, pp. 288-294).– «Հայ ընտանիք», 1979, № 7-9, էջ 51-54:

³² R. C u r z o n. Armenia: a Year at Erzeroum, and on the Frontiers of Russia, Turkey, and Persia. London, 1854, p. 226-227.

³³ S. M. G r e g o r y. Lord Byron and the Armenian Language.– “The Land of Ararat: Twelve Discourses on Armenia, her History and her Church”. London, 1920, pp. 122-131.

(Անգլիա), Լեսլի Մարշանդը³⁴ (ԱՄՆ), Քերոլայն Ֆրանկլինը³⁵ (Ուելս), Ալերամո Հերմետոն և Պատրիա Կոնի Ռատտի դի Դեզիոն³⁶ (Իտալիա) և շատ ուրիշներ:

2. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Ինչպես արդեն նշել ենք, Բայրոնի ու Միսիթարյանների առնչություններին պարբերական մամուլում անդրադարձել են ոչ միայն հայ, այլև օտարազգի շատ հեղինակներ (այդ թվում՝ Ս. Ղազարի սովորական այցելուներ): Այսպես, գերմանացի Լ. Հոլտհոֆը «Ueber Land und Meer» պատկերազարդ շաբաթաթերթի 1900-ի համարներից մեկում տպագրված «Միսիթարյանների վանքը Ս. Ղազար կղզում՝ Վենետիկի մոտ» ընդարձակ հոդվածում, որը 1901-ին արտատպվել է «Մշակում», գրում է. «Հանրահռչակ բանաստեղծ լորդ Բայրոնը, մեկը անգլիական գրականության առաջնակարգ աստղերից, Ս. Ղազար կղզու այդ պատմական այցելուն, խիստ քաղցր հիշողություններով էր կապված Միսիթարյան բարեպաշտ միաբանների հետ: Բացի այն սիրալիր և անկեղծ հարաբերություններից, որ միշտ վայելել է մեծ բանաստեղծը հյուրասեր միաբանների կողմից, Բայրոնի կացությունը Ս. Ղազարում բարերար ազդեցություն է թողել նրա բանաստեղծական ուժի վրա: Այնտեղ անցկացրած ժամանակվա ծնունդ են նրա մի քանի բանաստեղծական հասուն և արժանի երկերը, օրինակ «Childe Harold»-ի չորրորդ և անկասկած ամենազեղեցիկ երգը, նրա Վենետիկ կյանքից վերցրած դյուրիչ և սքանչելի պատմություն «Берро»-ն, նրա խորազգաց «Odea Venedig» գրվածքը, և վերջապես նրա ամենամեծ և հանճարեղ «Don-Juan» երկի առաջին երկու երգը»³⁷:

1924-ի «Բազմավեպի» չորրորդ համարն ամբողջովին նվիրված է Բայրոնին (մահվան 100-ամյակի կապակցությամբ), ընդ որում նյութերի գերակշիռ մասը բերված է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն: Այդ համարում արտատպված է անգլիացի բանաստեղծ Չարլզ Ռիչարդ Քամելի 1924-ի հունվարի 14-ին Ժնևից «Բազմավեպի» խմբագիր Ղ. Տայանին ուղղված նամակը, որտեղ նա գրում է. «Քերթողին մահվրենն ասդին սահած հարյուր տարիներու շրջանին ոչ մեկ տեղ չէ ա՛յնպես մեծարված իր հիշատակը և իր հանճարը լավագո՛ւնս հասկցված՝ ինչպես Վենետիկո Միսիթարյան Հայրերեն, որոնց նախորդներուն հետ լորդ Բայրոն անցուցած է ժամեր՝ որոնք հավանորեն երջանկագույններն եղան իր վիպական և աղմկահույզ կյանքին»³⁸: 1922-ին Չ. Քամելը այցելում է Ս. Ղազար կղզի և խորապես հուզվում, տեսնելով, թե ինչ հարգանքով են պահվում Բայրոնի նկարը և նրան պատկանող իրերն այն սենյակում, որտեղ նա սովորել է հայերեն: «Ես հյուրասիրվեցա ձեր Եղբայրության ընդել ասպնջականությամբը, ինձի թույլ տրվեցավ տեսնել գանձատունը հին ազգի մը մշակույթին, և լսել

³⁴ L. A. M a r c h a n d. Byron: A Portrait. Chicago, 1979, pp. 260-261.

³⁵ C. F r a n k l i n. Byron: A Literary Life. London, 2000, p. 105.

³⁶ Ա. Հ է ր մ է տ և Պ. Կ. Ռ. Դ է ր ի ն. Հայերի Վենետիկը. տասնվեց դար պատմության և առասպելի միջով, թարգմ. Սոնա Հարությունյան, Մուրսիա, Երևան, 2000, գլուխ ԺԴ-ԺԵ:

³⁷ Բ. Բ. Նամակ Գերմանիայից. «Մշակ», 1901, № 268 (2 դեկտեմբերի):

³⁸ «Բազմավեպ», 1924, № 4, էջ 109:

Պատարագը Քրիստոնեական կրոնըն ընդգրկող առաջին ժողովրդին մատրան մեջ: Հիշատակն այդ օրվան պիտի մնա հետս ամբողջ կյանքիս մեջ»³⁹, – գրում է նա վերոհիշյալ նամակում: «Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում ներկայացված է նաև Չ. Քամելի «Մխիթարյան հայրերուն ի Վենետիկ» բանաստեղծությունը անգլերեն և հայերեն, որը հայերեն է թարգմանել հայտնի բանասեր, թարգմանիչ Արսեն Ղազիկյանը: Չ. Քամելը գրում է.

Եթե ունի Անգլիա մարմինը, սիրտն՝ Հունաստան,
Իր հոգին, օ ն և օ՛ն, կը ժառանգեք մաս մը դուք,
Ազնվագույնը թերևս, զի ձեզի հետ կը մընան
Խաղաղությունն ու Մտերիմ սերը և ոչ ցավն ու վիշտ»⁴⁰:

Ամսագրի այդ համարում զետեղված «Բայրոն» անգլերեն հոդվածի հեղինակ Ռ. Բ. Անդերսոնը, որը մանրագնին վերլուծում է բանաստեղծի գրական ու հասարակական գործունեությունը և որոշում նրա տեղն ու դերը անգլիական բանաստեղծի գարգացման մեջ, այն կարծիքին է, որ «և՛ Միջերկրականից ու Արևելքից ուղարկած որոշ նամակների Բայրոնը, և՛ Ս. Ղազար վանքը նկարագրող ու հայրերի մասին ոգևորությամբ արտահայտվող Բայրոնը իսկական, անաղարտ Բայրոնն է»⁴¹:

«Բազմավեպի» 1932-ի առաջին համարում Բուդապեշտի “Magyarsay” օրագրից արտատպվում է մի փոքրիկ հոդված⁴²: Դա հունգարացի մի սովորական զբոսաշրջիկի տպավորություններ են, որոնք նա ստացել է Ս. Ղազար այցելելու ժամանակ: Հունգար այցելուն արձանագրում է, որ Մխիթար Սեբաստացու կողմից «սկսված գործը մինևույն հոգվով կը շարունակվի միշտ» և միանգամայն տեղին նկատում, որ «Այս հոգին ամեն բանե ավելի կը բացատրե հաստատությանս նշանաբանը, որուն մեջ զանգակը՝ է արթնությունը, բոցը՝ հոգեկան եռանդին նշանակ, ցուպը՝ կ'արտահայտե թե այս կրոնքին անդամները կ'ապրին առանց հոգնություն ճանչնալու գաղափարականին հետապնդումին մեջ, և զիրք մը՝ գիտության հոգին կը ցուցնե»: Այցելուն հիացմունքով է խոսում նաև Մխիթարյան մայրավանքի թանգարանի, տպարանի, պահպանվող ձեռագրերի, միաբանության երրորդ Աբբահոր՝ Տրանսիլվանիայի կոմս, հունգարահայ Ստեփանոս Ազոնց Գյուվերի, Բայրոնի («որուն ուսումնարանը խնամքով պահված է») մասին և ավելացնում. «մենք հունգարներս կրնանք պարծիլ Վենետիկի լճակին այս չքնաղ կղզիին համար»⁴³:

Կանադացի հայասեր բանաստեղծ, Բայրոնի քնարերգության երկրպագու Լոուրենս Դակինը, դեռևս 1930-ական թվականների սկզբներին լինելով Վենետիկում, այցելում է Ս. Ղազար և, ինչպես Բայրոնը, առաջին իսկ հայացքից սի-

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Չ. Ռ. Գ ա մ մ է լ լ. Մխիթարյան հայրերուն ի Վենետիկ, թարգմ. Ս. Ղազիկյան.– «Բազմավեպ», 1924, № 4, էջ 113:

⁴¹ R. B. A n d e r s o n. Byron, p. 118.

⁴² Մաճառ այցելու մը, Վենետիկի հայկական ձեմարանը.– «Բազմավեպ», 1932, № 1, էջ 43:

⁴³ Նույն տեղում:

րահարվում այդ «փոքրիկ Հայաստանին»: Լ. Դակինն իր հայասիրությունը հետագայում արտահայտում է «Աբարիսի երազը» (The Dream of Abaris) բանաստեղծության մեջ⁴⁴, որտեղ իր իսկ խոստովանությամբ «քանի մը տող նվիրած եմ ձեր Ուխտի (Մխիթարյանների – Ա. Բ.) ազնվական գործին և ձեր ընկճված հայրենիքին՝ Հայաստանի»⁴⁵: Իրոք, «քանի մը տող»՝ ընդամենը տասնվեց տող, բավականին ընդարձակ բանաստեղծության մեջ, սակայն այդ մի քանի տողերն էլ վկայում են, որ բանաստեղծը, որը «Բայրոնի դպրոցին խոր ու վերամբարձ վիպականությունն ունի, ճաշակի նրբությամբ և արվեստի շնորհքով», խորապես զգացել է օտարության մեջ ապրող և արարող հայերին տանջող վիշտն ու ցավը.

Դառնագին է վիշտն անոր որ գիտե թե հայրենի
Երկիրն ու հողն է դարձած ավեր, կործան, քարուքանդ:
Ոչ մըտերմի մահն և ոչ կորուստը մոր կաթոզին
Կարող են սիրտը փորձել ավելի մեծ կսկիծով⁴⁶:

Այնուհետև Լ. Դակինը, 1940-ին, հողված է պատրաստում «Բազմավեպի» համար, բայց Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով չի կարողանում ուղարկել Մխիթարյաններին: Միայն պատերազմից հետո՝ 1946-ին է այն տպագրվում⁴⁷: Հողվածում հեղինակը բավականին ուրույն և հետաքրքիր ձևով է խոսում «լճակին մեջ գտնվող այն փոքր կղզյակի մասին, ուր կա մենաստան մը, տեղ մը ուր կը բնակի Աստված»⁴⁸, տալիս է Մխիթարյան միաբանության ստեղծման հակիրճ պատմությունը, ոգևորված նշում, որ այնտեղ կան «երկու հազար հայերեն հին ձեռագիր մատյաններ, երեսուն հազար գիրքեր, ու զեղարվեստական անթիվ առարկաներ. բոլորն ալ հետաքրքրական»⁴⁹, հպարտությամբ հաստատում, որ Մխիթարյան հայրերը «իրենց խոր գիտությամբ և իմաստությամբ, բոլոր գիտնական ու բարձրաստիճան մարդոց հիացումը գրաված են: Նապոլեոն իր պաշտպանությունը շնորհեց անոնց: Բայրոն, ինչպես մանուկ մը իր մորը, անոնց դիմեց երբ վատթարումը և հուսահատությունը իր սիրտը կը կրծեին, և անոնք բարեսիրտ գտնվեցան ու իրեն պարզեցին մտքի իմաստություն: Բայրոն անոնցմե ստրվեցավ հայերեն լեզուն, որովհետև հայ էին անոնք և Հայաստանեն գաղթած. երկիր մը ուր Ս. Գիրքը զետեղած էր Եդեմի Պարտեզը ... և յնքան զեղեցիկ և հրապուրիչ է այդ երկիրը»⁵⁰: Ապա, խոսելով Մխիթարյանների հետ Բայրոնի կապվածության մասին, Լ. Դակինը գրում է, հենց որ «լարավոր երաժշտության ձայները, անշարժ ջուրերու վրայեն սահելով, Բայրոնի ականջին կը հասնեին, բանաստեղծը սովոր էր նետվիլ լճակին

⁴⁴ Լ. Դակին. Ապարիսի երազը, թարգմ. Հ. Փ. Ե. – «Բազմավեպ», 1934, № 9-10, էջ 350-353:

⁴⁵ Նույն տեղում, էջ 350:

⁴⁶ Նույն տեղում, էջ 352:

⁴⁷ Լ. Դակին. Սուրբ Ղազար, թարգմ. Հ. Փ. Ե. – «Բազմավեպ», 1946, № 9-10, էջ 244-247:

⁴⁸ Նույն տեղում, էջ 245:

⁴⁹ Նույն տեղում, էջ 246:

⁵⁰ Նույն տեղում, էջ 245:

մեջ ու լողալով դիմել դեպի գրոսավայրը, ուր կը մնար անձնապես ատեն որքան կարևոր էր քիչ մը շունչ առնելու համար, և տեսնելու թե ինչպես արեղաներուն զգաստ և առողջ միտքը մաքրագործեր էր իր հոգին ... ու հետո ետ կը վերադառնար»⁵¹:

1966-ին «Հանդես ամսօրյա» ամսագրում լույս է տեսնում Ջոն Քոնվեյ Օ'Բրայենի «Լորդ Բայրոնը, Ֆրիդրիխ ֆոն Շիլլերը և խորհրդավոր Հայը» վերնագրով անգլերեն հոդվածը⁵², որտեղ հեղինակը նշում է, որ միտքը շեղելու համար «Վենետիկ ժամանելուց մի քանի շաբաթ անց, Բայրոնը սկսել է ուսումնասիրել հայերեն հայկական վանքում, որտեղ գտել է հետաքրքրական ձեռագրեր ու գրքեր, ինչպես նաև թարգմանություններ արդեն գոյություն չունեցող հունական բնագրերից, և, ի հավելում դրանց, իրենց՝ հայերի աշխատությունները»⁵³: Հոդվածագիրը փորձ է անում ցույց տալ, որ Բայրոնը պատահամամբ չի «շեղվել» հայոց լեզվի նկատմամբ, այլ, ընդհակառակը, բանաստեղծի միտքն արդեն հետաքրքրվում էր հայ իրականությամբ ու բարյացակամ էր տրամադրված նրա նկատմամբ: Դեռևս մանուկ հասակում Բայրոնի վրա մեծ ազդեցություն է թողել Շիլլերի «Հայր. ոգետեսը» վեպի գլխավոր հերոսը: Նախքան Վենետիկ հասնելը, Շվեյցարիայում Բայրոնը, բժիշկ Պոլիդորին, Շելլի ամուսինները գերմանական պատմություններ էին կարդում ոգիների մասին, իսկ դրանից դեռևս - տասը տարի առաջ Բայրոնը, Շիլլերի «Հայի» ազդեցության տակ, գրել էր «Ալվազի Օսկարը» պոեմը, որը հիմնված էր Շիլլերի ստեղծագործության ամենանշանակալից դրվագի վրա: «Նկատի ունենալով Բայրոնի սնտիապաշտ, անշրջահայաց բնավորությունը, նրա սերը տեսիլքային ու գերբնական պատմությունների նկատմամբ, - գրում է Ջ. Օ'Բրայենը, - հեշտ է ըմբռնել նրա դուրսագազ մտքի վրա «Ոգետեսի» թողած ազդեցությունը»⁵⁴: Հետևաբար, ըստ հոդվածագրի, երբ Բայրոնը ժամանել է Վենետիկ, ամեննին էլ անսպասելի չի եղել հայերի հետ ունեցած հանդիպումը, քանի որ նրա սերը ուրվական-ոգիների պատմության հանդեպ և Շիլլերի չարագուշակ ու խորհրդավոր Հայն արդեն իսկ անջնջելի տպավորություն էին թողել բանաստեղծի մտքի վրա: Այդ իսկ պատճառով էլ, «պատահական երևույթ չէր, երբ նա որոշեց իր միտքը զբաղեցնել հայերենի ուսումնասիրությամբ: Ակներև է, որ Շիլլերի «Ոգետեսի» հետ նրա անսպասելի «հանդիպումը», իրոք, գրգռել է նրա ձգտումը տարօրինակ Հայի ազգի և մշակույթի մասին ավելի շատ գիտելիք ձեռք բերելու համար»⁵⁵: Այնուհետև հոդվածագիրը անդրադառնում է Ս. Ղազարում Բայրոնի հայերեն սովորելուն, Մխիթարյանների հետ նրա առնչություններին և ավելացնում, որ «չնայած Բայրոնի առաջին ծանոթությունը Հայի հետ նրա մոտ հարուցել էր ինչ-որ չարագուշակ ներգործության գաղափար այդ ժողովրդի նկատմամբ, իրական ճանաչումը դրա հակապատկերն էր: Մուրբ Ղազար վանքի վանական-

⁵¹ Նույն տեղում, էջ 245-246:

⁵² J. C. O ' B r i e n. Lord Byron, Friedrich von Schiller and the Mysterious Armenian. Vienna.- × Հանդես ամսօրյա», 1966, № 10-12, էջ 525-542:

⁵³ Նույն տեղում, էջ 539-540:

⁵⁴ Նույն տեղում, էջ 529:

⁵⁵ Նույն տեղում, էջ 539:

ների մասին նա հայտնում է. «Այս միաբանության եղբայրաց մաքրակեցությունը, հանգստավետությունը, բարեկրթությունը, անկեղծ նվիրվածությունը, բարձր արժանիքները, առաքինությունները սքանչելիորեն ներդաշնակված են համակելու աշխարհիկ մարդուն մի հավատով, թե նույնիսկ այս կյանքի մեջ կա մի ուրիշը և ավելի լավը»⁵⁶: Ջ. Օ'Բրայենի մեջբերումը մի հատված է «Հայերեն-անգլերեն քերականության» ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանից: Հոդվածագիրը միանգամայն իրավացիորեն արձանագրում է, որ «Բայրոնը... այնտեղ՝ հայ ժողովրդի սրտի մեջ, իր համար տեղ էր ստեղծել: Նրա հարգանքը նրանց (հայերի – Ա. Բ.) մտավոր ձեռքբերումների, ինչպես նաև նրա սերը նրանց ու նրանց լեզվի նկատմամբ երկար ժամանակ կհիշվի և կգնահատվի: Շիլլերի խորհրդավոր Հայր դուռ էր բացել Բայրոնի համար՝ առաջնորդելով դեպի մի ընդարձակ դահլիճ, որը լցված էր շատ անհրաժեշտ ընկերներով»⁵⁷: Ջ. Օ'Բրայենի՝ «Հանդես ամսօրյայում» լույս տեսած հոդվածին անդրադարձել է Կ. Պոլսի «Մարմարա» թերթը, 1967-ի հուլիսի 15-ի համարում նշելով, որ դա «լույս կը սփռե թե ինչպե՞ս լորդ Բայրոն հետաքրքրված է Հայ ժողովուրդով ու հայերենով, և թե ինչպես ստրված է մեր լեզուն»⁵⁸:

Նյու Յորքում 1960-ից անգլերեն լույս տեսնող «Արարատ» հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական եռամսյա հանդեսի 1967-ի ամառային համարում տպագրված Աննա Պաուլուչիի «Հայաստան՝ Վենետիկի ջրերի վրա» հոդվածում⁵⁹ հեղինակն անդրադառնում է Բայրոնի առաջին այցելությանը Ս. Ղազար, «Հայերեն-անգլերեն քերականության» ձեռնարկի համար բանաստեղծի գրած առաջաբանին, Մխիթարյանների մտավոր և հոգևոր բազում շնորհքների վերաբերյալ նրա ունեցած կարծիքին, միաժամանակ նշելով այն հանգամանքը, որ «կարծես թե անհանգիստ Բայրոնը Ս. Ղազարում գտել է իրեն կլանող զբաղմունք և հոգեկան հանգստություն, ինչը նա այդքան փափագում էր»⁶⁰: Ուստի և «շուտով նա դառնում է» Ս. Ղազարի «մշտական այցելու՝ հրապուրվելով վանականների հետ անցկացրած գրույցներով և հայերեն սովորելու ցանկությամբ»⁶¹: Այնուհետև Ա. Պաուլուչին քննարկում է Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունների, հայերենից նրա կատարած թարգմանությունների, անգլերեն-հայերեն (1821) և հայերեն-անգլերեն (1825) բառարանների հրատարակման հետ կապված հարցեր, ինչպես նաև ընդգծում է, որ «Չայլդ Հարոլդի» չորրորդ նվագը նա գրել է Ս. Ղազարում, ծովախորշին նայող գառիթափում գտնվող ձիթենիների տակ, որտեղ նա նստում էր ժամերով՝ գրուցելով վանականների հետ կամ էլ հիանալով տեսա-

⁵⁶ Նույն տեղում, էջ 540:

⁵⁷ Նույն տեղում, էջ 542:

⁵⁸ Ջ. Օ. Բ. Ն. Ի. Ս. - Տ. Ս. Ս. Ս. Լորդ Բայրոն, Վենետիկը և հայերը. – «Մարմարա», 1967, 15 հուլիսի, տես նաև նույն թիվը՝ Լորդ Բայրոն և իր գործերը. – «Մարմարա», 1967, 16 հուլիսի:

⁵⁹ A. P a o l u c c i. Armenia on the Watters of Venice. – “Ararat”, 1967, № 31, Summer, p. 3-7.

⁶⁰ Նույն տեղում, էջ 6:

⁶¹ Նույն տեղում:

րանով»⁶²: Այստեղ հողվածագիրը անդրադառնում է նաև այն փաստին, որ Բայրոնի բանաստեղծությունների հետ մեկտեղ «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմը Ղևոնդ Ալիշանի կողմից թարգմանվել է հայերեն, իսկ հայ բանաստեղծներ Սմբատ Շահագիզը և Ռուբեն Որբերյանը ոգեշնչվել են Բայրոնի քնարերգությամբ, ինչն իր արտացոլումն է գտել նրանց ստեղծագործություններում:

«Հայ ընտանիք» ամսագրի 1974-ի 11–12 միացյալ համարը գրեթե ամբողջությամբ նվիրված է Բայրոնին՝ մահվան 150-ամյակի կապակցությամբ: Այսպես, ամսագրի տիտղոսաթերթում տեղադրված է Ս. Ղազարի թանգարանում պահվող՝ Բայրոնի դիմանկարի (հեղինակ՝ Հովհաննես Փորթուգալյան) վերարտադրանկարը և Չ. Քամելի «Մխիթարյան հայրերուն ի Վենետիկ» բանաստեղծության հանրահայտ խոսքերը, որոնք մենք մեջբերել ենք «Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում գետեղված նյութերի քննարկման ժամանակ: Այս համարում գետեղվել է նաև Լոնդոնի Բայրոնյան ընկերության անդամ Բեաթրիս Հանսի հողվածը (անգլերեն և հայերեն)⁶³, որի հեղինակը գրում է իր ստացած տպավորությունների մասին, երբ այդ կազմակերպության մյուս անդամների հետ 1974-ին այցելել էր Ս. Ղազար: Այցելուներին, ինչպես իր ժամանակին Բայրոնին, հիացրել են «ազնիվ, հասկացող եւ զարգացած» վանականները, կամարազարդ վանքը, գույների ճոխ երանգապնակով հարուստ պարտեզը, գեղեցիկ Ձեռագրատունը՝ իր թանկարժեք ձեռագրերով, նկարազարդ առաստաղներով Թանգարանը՝ իր գեղեցիկ քանդակներով (հատկապես հիշարժան են Հ. Ղևոնդ Ալիշանի և Կոմիտաս Վարդապետի կիսանդրիները), «հինի և նորի խառնուրդով» տպավորիչ և սքանչելի «նկարներու սրահն», որտեղ «խսկապես զգացինք թե հայկական գեղարվեստը դեռ կենսունակ է բանաստեղծությամբ, երաժշտությամբ, նկարչությամբ, մինչ միննույն ատեն, գեթ իմ անձես դատելով, կը գիտակցեի իմ տգիտությանս, որ մինչև հիմա այս մասին ավելի ծանոթություն մը չէի ունեցած», և, վերջապես, տպարանը, որի գրքերի «թուղթին և տպագրության որակը լավագույնն է»⁶⁴:

1978-ին «Հայ ընտանիք» ամսագրում արտատպվում է Ջոֆրի Ֆլետչերի «Ծովալճակի միջով դեպի գանձերի կղզին» հողվածը (անգլերեն)⁶⁵, որը լույս է տեսել անգլիական «Daily Telegraph» օրաթերթի 1977-ի սեպտեմբերյան համարներից մեկում: Հեղինակը, խոսելով Ս. Ղազարի մասին, նշում է, որ այն մի մենաստան է՝ կղզի-այգի, որտեղ 1816-ին Բայրոնը փնտրեց և գտավ ապաստան իր համար: Բացի նրանից, որ կղզում մթնոլորտը խաղաղ էր, Բայրոնի համար առնչությունը բարեպաշտ, ազնիվ ու կրթված հայ վանականների հետ օգտակար էր և ուսանելի: Ինչպես գրում է հողվածագիրը, Բայրոնն իր «խենթ հանձարով ու խառնաշփոթ կյանքով» միշտ հիացրել է իրեն և ավելացնում. «Վա-

⁶² Նույն տեղում, էջ 7:

⁶³ B. H a n s s. A Visit to the Mekhitarist Convent of St. Lazarus. (Բեաթրիս Հանս, Այցելություն մը Ս. Ղազարի Մխիթարյան վանքին). – «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 12-13:

⁶⁴ Նույն տեղում, էջ 13:

⁶⁵ G. F l e t c h e r. Across the Lagoon to Island Treasures. – «Հայ ընտանիք», 1978, № 1-2, էջ 47:

նականները միշտ լավ են վերաբերվել բանաստեղծին, իսկ վերջինս էլ իր հերթին՝ նրանց: Սենյակը, որտեղ նա սովորել է հայերեն, մնացել է այնպես, ինչպես ինքն է թողել. աթոռները, գրապահարանները, լուսաշող առաստաղը և պարտեզի մոտակա բնապատկերը, որն անհանգիստ սրտին պարզևում է խաղաղ հանգրվան»⁶⁶:

1979-ին «Հայ ընտանիք» ամսագրում լույս է տեսնում Դ. Բ. Գրեգորի «Բայրոնի հայոց լեզվի իմացությունը» վերնագրով անգլերեն հոդվածը⁶⁷: Հեղինակը գրում է. «Հանրության ճաշակի կամ գրական չափանիշների փոփոխության հետ մեկտեղ Բայրոնի համբավը կարող է աճել կամ նվազել, սակայն աշխարհում միակ տեղը, ուր այն մնում է միշտ անբիծ իր ողջ փայլով, վենետիկյան ծովալճակի Ս. Ղազար կղզու հայկական վանքն է: Այստեղ ավելի շուտ, քան լոնդոնյան արիստոկրատների հավաքություններում, Բայրոնը արդարև հասավ հասարակական ճանաչման»⁶⁸: Հոդվածագիրը մեջբերումներ է կատարում Բայրոնի «հայկական» նամակներից, նրա՝ «Հայերեն-անգլերեն քերականություն» ձեռնարկի համար գրած հայտնի առաջաբանից և Հ. Ավգերյանի օրագրությունում կատարված գրառումներից, նշում, որ Բայրոնի բազում բանաստեղծություններ թարգմանվել են հայերեն, ինչպես նաև նկարագրում է Հ. Ավգերյանի և այլ նկարիչների գործերը, որոնցում արտացոլված են Բայրոնի և սուրբ հայրերի հանդիպումներն ու զրույցները, բանաստեղծի հայերեն սովորելը, հանգստանալը և խորհրդածելը ձիթենիների տակ: Բացի այդ, Դ. Գրեգորը իր հոդվածում անդրադառնում է քերականությունների երկու ձեռնարկների վրա Բայրոնի կատարած աշխատանքին և հայերենից նրա կատարած թարգմանություններին:

1980-ին «Հայ ընտանիք» ամսագրում լույս են տեսնում Ավստրալիայի Բայրոնյան միության քարտուղար Ժակլին Վուանյե-Մարշալի երկու հոդվածները (անգլերեն)⁶⁹, որոնք հեղինակի համաձայնությամբ արտատպվել են այդ միության Տեղեկագրից: Այդ հոդվածները հեղինակի Ս. Ղազար կղզի այցելությունից ստացած տպավորությունների և հիշողությունների արդյունք են: Առաջին հոդվածի բնաբան է ընտրված Չ. Քամելի բանաստեղծության հանրահայտ խոսքերը, որոնք մենք արդեն մեջբերել ենք: Այդ հոդվածում Ժ. Վուանյե-Մարշալը հակիրճ ներկայացնում է Ս. Ղազար կղզու պատմությունը, խոսում Մխիթարյան միաբանության հիմնադրի, նրա համախոհների մասին և հուզմունքով նշում, թե ինչպիսի ակնածանքով է պահվում այստեղ Բայրոնի հիշատակը: Հոդվածագիրը հիացմունքով նկատում է, որ «վեհաշուք գրադարանը նման է թանգարանի: 1876-ին այն պարունակել է 30 000 գիրք՝ հիմնականում հայերեն, նկարագարոված աղոթագրքեր, պապիրուսներ, մետաղադրամներ, արձանիկներ, եգիպտական մումիա և այլն»⁷⁰: Այնուհետև հեղինակը նշում է, որ 1975-ի

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ D. B. G r e g o r. Byron's Knowledge of Armenian.– «Հայ ընտանիք», 1979, №5-6, էջ 34-36:

⁶⁸ Նույն տեղում, էջ 34:

⁶⁹ J. V o i g n i e r - M a r s h a l l. San Lazzaro, "Island of the Blest": the Convent Today.– The Armenian Convent of St. Lazarus and its Byron Memories.– «Հայ ընտանիք», 1980, №11-12, էջ 50-53:

⁷⁰ Նույն տեղում, էջ 51:

հրդեհը մեծ վնաս է հասցրել եկեղեցուն, ոչնչացրել գրադարանի մի մասը: Այցելուններին ցույց են տրվում նաև գրադարանին կից սենյակները, որոնցից մեկում շատ արժեքավոր ձեռագրեր են պահվում, իսկ մյուսը կրում է «Բայրոնի սենյակ» անվանումը: «Այստեղ կան մի քանի նկարներ՝ նվիրված Բայրոնի Ս. Ղազար կղզում անցկացրած ժամանակին: Դրանցից մեկը Հ. Այվազովսկու կտավն է, որը պատկերում է բանաստեղծի ժամանումը, մակույկից դուրս գալը և դիմավորումը վանականների կողմից⁷¹: Մի այլ նկարում նրա գրույցն է հայրերի հետ պատշգամբում (դեռևս գոյություն ունի), որը շատ լավ պատկերված է աստիճանավանդակի բաց տարածությունում՝ վանականները բավականություն են ստանում այլ երկրից իրենց մոտ եկած այդ խելամիտ երիտասարդի ընկերակցությունից⁷²: Հողվածագիրը հիշատակում է նաև այլ նկարների մասին. Բայրոնն իր ուսուցչի հետ հայերենի դասի ժամանակ, Բայրոնը բլրակի վրա գտնվող ձիթենիների տակ նստած խորհրդածելիս (նկարիչ՝ Ք. Ռայխարդտ), սենյակի դռան վերևում կախված Բայրոնի դիմանկարը, որը 1864-ին արտանկարել է Մխիթարյանների նախկին սանը՝ Հ. Փորթուգալյանը, Լոնդոնի թանգարանում գտնվող՝ Ֆիլիպսի հայտնի նկարից: Այնուհետև Շ. Վուանյե-Մարշալը մատնանշում է, որ միաբանությունում գրի է առնվել այն փաստը (չնայած այդ մասին չեն նշել ոչ Մուրը, ոչ էլ Բայրոնը), որ բանաստեղծն իր առաջին այցելության ժամանակ մնացել է Մխիթարյանների պարտեզում մինչև մթնշաղ և, մեկնելով այնտեղից, խոստացել է վերադառնալ հաջորդ օրը՝ վաղ առավոտյան ու կատարել է իր խոստումը: Իսկ երկրորդ այցելության ժամանակ նա արդեն թույլտվություն է խնդրել հայերեն սովորելու նպատակով բնակվել վանքում՝ մտադրվելով հասուցել սննդի և կացարանի ծախսերը: Սակայն քանի որ վանքի կանոնները խիստ էին, թույլտվություն չտրվեց, և Բայրոնը շարաթվա ընթացքում գալիս էր 4-5 անգամ՝ մնալով առավոտյան մոտավորապես ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը 6-ը: Նրա տրամադրության տակ է եղել միանգամից երկու սենյակ, և Հայր Պասկալ Ավգերի մոտ սկսել է ուսումնասիրել հայերենը: Սակայն, ինչպես նշում է հողվածագիրը, առաջին դասերն անցկացվել են ավելի շուտ երկխոսությունների, քան առաջադրանքների ձևով: Բայրոնը տվել է շատ հարցեր Հայաստանի պատմության և գրականության վերաբերյալ, իսկ Հայր Պասկալը պատասխանել է: Այնուհետև հողվածագիրն ավելացնում է, որ այժմ կառուցվում է նոր թանգարան, ուր շատ այլ իրերի հետ մեկտեղ պահվելու են նաև Բայրոնի իրերը, հիմնականում՝ թանաքամանր, գրիչները, ճշգրիտ վերարտադրությամբ նրա հայերեն ստորագրությունը, ինչպես նաև 1821-ին Լոնդոնում Ջոն Մըրրեյի կողմից Հ. Պասկալին տրված գրքերը, 1829-ին Տրիեստի բրիտանական հյուպատոսի նվիրաբերած՝ Բայրոնի երկերի լիակատար ժողովածուն և դրա 17 հատորներից բաղկացած մի այլ հրատարակություն՝ ուղարկված 1836-ին Ջոն Մըրրեյի կողմից: Շ. Վուանյե-

⁷¹ Խոսքը, ըստ երևույթին, Հ. Այվազովսկու «Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում» (1898) նկարի մասին է, որը գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում (Երևան): Հողվածագիրը, հավանաբար, տեսել է այդ նկարի վերարտադրանկարը:

⁷² J. Voignier-Marshall. Նշվ. հոդվ., էջ 51:

Մարշալը նշում է, որ նախքան մեկնելը, այցելուները զբոսնել են պարտեզում, կղզու այն մասում, որտեղ սիրում էր անցկացնել երեկոները Բայրոնը: Տիրող ավանդության համաձայն, Բայրոնը «Չալլո Հարոլդի ուխտագնացության» չորրորդ նվագի մի մասը գրել է Ս. Ղազարում, նշում է հեղինակը, և ավելացնում, թե բանաստեղծն այստեղ, անշուշտ, պետք է որ գտներ ոգեշնչման աղբյուր:

Ժ. Վուանյե-Մարշալի երկրորդ հոդվածը նվիրված է Ջ. Մաքեյի գրքին⁷³: Այն սկսվում է հետևյալ խոսքերով. «Անցյալ տարվա սկզբին զարմանալի պատահականությամբ ձեռքս ընկավ կազմահան արված, բավականին հնամաշ մի փոքրիկ գիրք՝ «Լորդ Բայրոնը հայկական վանքում» վերնագրով, որը գրել է Ջորջ Էրիկ Մաքեյը... և 1876-ին Վենետիկում հրատարակել է «Պոլիզոտա» հրատարակչությունը... Սույն աշխատությունը պարունակում է «Կույր վանականի խոստովանությունները», որոնք անցյալում ոչ մի անգամ չեն հրատարակվել, և լորդ Բայրոնի կտակն ու կտակի հավելվածը՝ ստորագրված և կնքված 1818-ին Վենետիկում...»⁷⁴: Մակայն հոդվածագրին այդ գիրքը հետաքրքրել է նաև նրանով, որ այն 1876-ին Վենետիկի Ս. Ղազար կղզու վանքում գնել է ավստրալիացի մի այցելու և իր նամակի (վերջինս մեջբերվում է հոդվածում) հետ ուղարկել քրոջը, որը, հավանաբար, եղել է Բայրոնի քնարերգության երկրպագու: Նամակում նշվում է, որ ավստրալիացի այցելուն բանաստեղծի փոքրիկ աշխատասենյակում, սովորական սեղանի առջև նստել է նրա աթոռին, տեսել է փայտյա թանաքամանը, հին դանակը, գլխարկը, վերարկուն, ինչպես նաև նրա ստորագրությունը թագավորների, արքայազնների, պապերի, եպիսկոպոսների ստորագրությունների կողքին, տեսել է Բայրոնի և Ավգերյանի դիմանկարները: Ս. Ղազարի այս այցելուն գրում է նաև արվեստի ու գիտության բնագավառում Մխիթարյանների կատարած հին ու նոր գործերի մասին, հիշատակում նրանց հարուստ գրադարանը: Այնուհետև հոդվածագիրը անդրադառնում է վերոնշյալ գրքի բովանդակությանը, որտեղ քննարկված են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող բազմաթիվ հարցեր, բերված են «Հայերեն-անգլերեն քերականության» ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանը, նրա որոշ թարգմանություններ հայերենից և այլն: Հոդվածում կա հետաքրքիր մի մեջբերում՝ ծեր, կույր վանականի հետ առնչվող. երբ 1868-ին Մաքեյը հարցրել է նրան, թե ինքը ինչ նկատի ուներ ասելով, որ Բայրոնը սուրբ է երկնքում, ցնցող է եղել վանականի պատասխանը. «...նրա երեսը կարմրեց մինչև քունքերը, նա ճանկեց իր գավազանը, կարծես թե այն սուր լիներ, և ասաց կամ ավելի շուտ ճչաց, հետևյալ բառերը. «Իմ լորդ Բայրո-

⁷³ Ցավոք, չնայած մեր բազմամյա պրպտումներին, այդպես էլ այդ գիրքը մեզ չհաջողվեց գտնել: Մենք նույնիսկ գրավոր դիմեցինք տիկին Շ. Վուանյե-Մարշալին՝ խնդրելով ուղարկել Ջ. Մաքեյի գրքի քսերոպատձենը: Մակայն նա պատասխանեց, որ Մխիթարյանների խնդրանքով այդ գրքուկը 2006-ի հուլիսի 26-ին ուղարկել է Ս. Ղազար՝ չիմանալով հանդերձ այն տեղ է հասել, թե՛ ոչ (Շ. Վուանյե-Մարշալի մեզ հասցեագրված նամակը թվագրված է 16 հոկտեմբերի, 2006):

⁷⁴ J. Voignier-Marshall. Նշվ. հոդվ., էջ 52:

նր մեռավ Հունաստանի համար, բայց նա մեռավ նաև Հայաստանի համար... Նա սուրբ է երկնքում, քանի որ անկախության համար կռվելով է մահացել»⁷⁵:

Ամսագրի նույն համարում գետեղված է նաև Կասա Մանիի Շելլիի թանգարանի տնօրեն Մարգարետ Բրաունի «Բայրոնյան մասունքները Վենետիկի Ս. Ղազար հայկական վանքում» խորագրով հաղորդումը (անգլերեն)⁷⁶, որն արտատպվել է բրիտանա-իտալական ընկերության “Rivista” (№273, նոյեմբեր-դեկտեմբեր, 1979) ամսագրից: Հաղորդումից տեղեկանում ենք, որ մինչ այդ Շելլիի թանգարանում պահվող Բայրոնի որոշ գրքեր նվիրաբերվել են Ս. Ղազարի հայկական վանքին, քանի որ Բայրոնը Մխիթարյանների մոտ սովորել է հայերեն, աշխատել է նրանց հետ, խորհել է ձեռագրերի ու թղթերի պարտեզում և իր մեջ ուժ է վերագտել ավարտելու «Մանֆրեդը» և «Չայլդ Հարոլդի» չորրորդ նվագը: Բացի այդ, ինչպես գրեթե բոլոր հոդվածներում, այնպես էլ այստեղ նկարագրվում է Բայրոնի սենյակը՝ իր պարագաներով: Հոդվածագիրը մեջբերում է կատարել նաև բանաստեղծի՝ 1816-ին Մուրին գրած նամակից՝ չնշելով ամսաթիվը, բայց, ցավոք, խառնել է իրար երկու տարբեր նամակներ (թվագրված՝ 5 դեկտեմբերի և 27 դեկտեմբերի) և Բայրոնի կողմից Ս. Գյուվերի արտաքինին տրված նկարագրությունը վերագրել Հ. Ավգերյանին:

1981-ին «Հայ ընտանիքում» «Ս. Ղազարյան մրմունջներ» խորագրի տակ լույս է տեսնում Անտոնիո Մպադաֆորայի «Ս. Ղազար» բանաստեղծությունը (հայերեն և իտալերեն), որի հայերեն թարգմանությունը կատարել է Հ. Չանթայանը: Այս բանաստեղծության մեջ տրվում է «կղզյակն Հայոց» Ս. Ղազարի նկարագիրը, որտեղ «լույսը .. չի՞՞ նրվադիր աղջամուղջին. զի Սըխիթար ... կ'ողջագուրե բազկատարած եկվորն ամեն» և «կայանիկ մը ... անմահ հոգվույն, կ'որոներ Բայրոն՝ ծարավ խաղաղության»⁷⁷:

«Հայ ընտանիքի» 1983-ի համարներից մեկում տպագրված է Դոնաթելա Ռոսսիի բավականին հետաքրքիր հոդվածը (անգլերեն)⁷⁸: Չնայած այն կրում է «Բայրոնը և կրոնը» խորագիրը, սակայն հոդվածում հիմնականում արծարծվում են Բայրոնի և հայ վանական-գիտնականների առնչություններին վերաբերող հարցեր: Դա ևս մի անգամ հաստատում է այն, որ ոչ միայն հայ, այլև օտար հեղինակները, խոսելով Բայրոնի կյանքի և ստեղծագործության իտալական շրջանի մասին, գրեթե միշտ անդրադարձել են Բայրոնի ու Մխիթարյանների համատեղ գիտական գործունեությանը, ինչպես նաև նրա այն ստեղծագործություններին, որոնք կրել են «հայկական» ազդեցություն: Հոդվածը բաղկացած է ներածությունից և երեք մասերից: Ներածականում հեղինակը նշում է, որ Վենետիկ ժամանելուց անմիջապես հետո, առաջին իսկ շաբաթում, աշնանային մի մառախլապատ օր, որն այնքան էլ հարմար չէր զբոսաշրջության համար, Բայրոնը և Ջ. Հոբհաուզը այցելել են Ս. Ղազար կղզու հայկական վանք:

⁷⁵ Նույն տեղում, էջ 53:

⁷⁶ M. B r o w n. The Byron Relics at the Armenian Monastery of St. Lazzaro Venice.– «Հայ ընտանիք», 1980, №11-12, էջ 53:

⁷⁷ Մ. Ս փ ա տ ա Ֆ ն ր ա. Ս Ղազար, թարգմ. Հ. Յ. Չանթայան.– «Հայ ընտանիք», 1981, №1-2, էջ 41:

⁷⁸ D. R o s s i. Byron and Religion.– «Հայ ընտանիք», 1983, № 3-4, էջ 25-30:

Հողվածագրի կարծիքով, այդ այցելության դրդապատճառները այնքան էլ պարզ չեն, քանի որ մինչ Բայրոնը հայտնի չէ որևէ նշանավոր անձնավորության՝ Ս. Ղազար կատարած այցի մասին, չնայած «Հայերեն-անգլերեն քերականության» ձեռնարկի համար նախատեսված առաջաբանում Բայրոնը պնդում է, որ ինքն էլ, շատ ճանապարհորդների նման, տարված է եղել հայկական վանքի միաբանությամբ: Փաստորեն, այդ այցից հետո՝ գրեթե վեց ամիս, Բայրոնն սկսում է հետաքրքրվել իր համար յուրահատուկ ոլորտով՝ կրոնով: Այնուհետև հողվածագիրը նշում է, որ Բայրոնը, լինելով բողոքական, իրականում չի եղել հավատացյալ և թե՛ Անգլիայում, թե՛ Բուսիայում, թե՛ ցանկացած այլ վայրում իր ճանապարհորդությունների ընթացքում հազվադեպ է այցելել եկեղեցի, բայց Ս. Ղազարում նա հաճախ է մտել եկեղեցի (եթե ոչ աղոթելու, ապա խորհրդածելու, մտովի մաքրագործվելու համար), որին երբևէ չի ծաղրել ու չի քննադատել: Միգուցե դա արդյունք է Մխիթարյան հայրերի կողմից ջերմ ընդունելության և իր հանդեպ ունեցած հոգատար վերաբերմունքի, որն ստիպել է Բայրոնին փոխել իր կարծիքը եկեղեցականների նկատմամբ և նույնիսկ «Մանֆրեդում» կերտած վանահոր կերպարը նմանեցնել Մխիթարյան սուրբ հայրերին: Սույն հողվածի մյուս մասերի միայն վերնագրերը՝ «Բայրոնը և հայ հայրերը», «Բայրոնի և հայերի միջև եղած փոխազդեցությունը», «Բայրոնը և նրա գեղարվեստական ստեղծագործությունը՝ հայկական հանդիպումների համընթացության ներքո», արդեն իսկ խոսում են այն մասին, որ հողվածն ամբողջությամբ նվիրված է Բայրոնի ու Մխիթարյանների համատեղ գործունեությանը, ինչպես նաև Բայրոնի վրա Մխիթարյան հայրերի թողած ազդեցությանը: Հողվածի առաջին մասում Դ. Ռոսսին նշում է, որ Մխիթարյանների ջերմ ընդունելությունը «զարմանալի չի եղել Բայրոնի համար, քանի որ նա սովոր էր համարվել մի տեսակ կենդանի հրաշք այն մարդկանց համար, ովքեր կապ ունեին իր հետ»⁷⁹: Ս. Ղազար կղզու անդորրը նպաստավոր էր Բայրոնի այդ շրջանի հոգևոր կյանքի համար և համապատասխանում էր հենց բանաստեղծի սոված գնահատականին՝ «Երանավետ կղզի»: Մյուս կողմից՝ բանաստեղծը, ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանը, նրա հոգևոր գանձերին, չէր կարող անտարբեր մնալ նրա ճակատագրի հանդեպ: Տառապած ու հալածված հայ ժողովրդի մեջ Բայրոնը տեսնում էր վեհ ու խիզախ ազգի, որը երբեք չէր կորցրել իր հպարտությունը: Եվ բանաստեղծը որոշում է սովորել այդ ժողովրդի լեզուն, որը նրա համար դառնում է «Այբուբենի մի Վաթեռլոո»⁸⁰: Հողվածի երկրորդ մասում հեղինակը նկատում է, որ «երկու հեռավոր մշակույթների՝ անգլիական և հայ մշակույթների միջև հետաքրքրությունների փոխանակումը ստեղծեց փոխազդեցության մի տեսակ, որը կարող էր համարվել եզակի Ս. Ղազար կղզու պատմության մեջ»⁸¹: Հողվածի երրորդ մասում խոսվում է այն

⁷⁹ Նույն տեղում, էջ 26:

⁸⁰ Այս արտահայտությունը Բայրոնն օգտագործել է 1816-ի դեկտեմբերի 5-ին Թ. Մարին ուղղած նամակում (տե՛ս T. h. M. o. r. e. The Life, Letters and Journals of Lord Byron. London, 1908, p. 329):

⁸¹ Նույն տեղում, էջ 27:

մասին, որ Բայրոնը «Մանֆրեդ» դրամայում, Մխիթարյանների հետ ծանոթանալուց հետո, վերափոխել է վանահոր կերպարը՝ դաժան մարդու փոխարեն նրան դարձնելով սիրող ու կարեկցող անձնավորություն, ինչպես նաև բերվում են որոշ հատվածներ դրամայից: Բացի այդ, հոդվածագիրը նշում է, որ «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ նվագի մի մասը գրվել է Ս. Ղազարում, իսկ այնուհետև անդադարառնում Բայրոնի ստեղծագործությունների թարգմանիչներ Ղ. Ալիշանին, Հ. Թումանյանին, Հ. Մասեհյանին և մյուսներին, նշում նաև այն մասին, որ Բայրոնն ազդեցություն է ունեցել հայ գրողներ Ռ. Որբերյանի և Ս. Շահագիզի վրա:

1987-ին «Հայ ընտանիքում» լույս է տեսնում հունգար թարգմանչուհի և գրականագետ Ռապ Ժուժա-Շուշանի հայերի ու հայ մշակույթի նկատմամբ ունեցած ջերմ սերն ու համակրանքն արտացոլող, բազմաթիվ տպավորություններով լի հոդվածը⁸², որի համար ամսագրի խմբագրությունը (կամ միգուցե ինքը՝ հեղինակը) որպես բնաբան ընտրել է հայոց այբուբենը և դրա վերաբերյալ բանաստեղծ Գևորգ Էմինի «Յոթ երգ Հայաստանի մասին» գրքի «Երգ գրի մասին» քերթվածում⁸³ ամփոփված խորհմաստ ու հրաշալի մտքերը: Հոդվածում հակիրճ որոշ տեղեկություններ են տրվում հայ-հունգարական գրական առնչությունների, հայ մշակույթի և Մխիթարյան միաբանության ստեղծման ու գործունեության մասին: Հոդվածագիրը նշում է, որ աշխարհի տարբեր ծայրերից հայազետները գալիս են Ս. Ղազար «բացառիկ ճոխ ձեռագիրներուն հավաքածուն ուսումնասիրելու համար», ապա ավելացնում. «Լորդ Բայրոն 1816–1817-ին հոս գտեր է իր բնակությունը, ուր շարունակած է հայագիտական ուսումները: «Բայրոնի սենյակը» ուր մեծ բանաստեղծը ստրված է, աշխատած է, մինչև այսօր կարելի է այցելել»⁸⁴: Ռապ Ժուժան, որը եղել է նաև Երևանի Մատենադարանում և ապշեցուցիչ տպավորություններ ստացել, հիանում է Մխիթարյան մայրավանքի գրադարանով ու մատենադարանով: Ինչպես ինքն է նշում, «... այս փոքրիկ կղզիին հավաքածոն՝ աշխարհիս երկրորդ ամենահարուստ հավաքածոն է՝ ձեռագիրներու և գիրքերու: Մոզայիքով զարդարված հատակ, պատերու վրա որմնանկարներ, հսկա սրահ մը՝ կը պահե իր մեջ շուրջ հիսուն հազար հատորներ: Միաբանները հավաքեր են դարերու ընթացքին գրեթե բոլոր հայաստան գրքերը, որոնք՝ իրենց պատմության, հավատքին, գրականության, արվեստին մասին կը խոսին ... ամենեն ավելի թանկագին հավաքածոն կը պահպանվի բոլորաձև շենքին մեջ, այն է ձեռագիրներու հատորները: Արձաթապատ ավետարաններ, Թ-Ժ դարու գրչագիրներ, սքանչելի մանրանկարներ...: Ամենեն հին Աստվածաշունչի օրինակներ, բժշկարաններ, աղոթամատյաններ, ժամանակագրություններ, եկեղեցական հին առարկաներ»⁸⁵: Հունգարուհի բանասերը, որը միայն այստեղ է իմանում Հովհաննես Այվազովսկու

⁸² Ռ. Ժ ու ժ ա - Շ ու շ ա ն. Հայկական հողին վրա՝ Բուսլիո մեջ, թարգմ. Հ. Ղ. Ֆ. – «Հայ ընտանիք», 1987, № 7-8, էջ 46-49:

⁸³ Տե՛ս Գ. Է մ ի ն. Երկերի ժողովածու, երեք հատորով, հ. 3, Երևան, 1986, էջ 198-298:

⁸⁴ Ռ. Ժ ու ժ ա - Շ ու շ ա ն. նշվ. հոդվ., էջ 47:

⁸⁵ Նույն տեղում, էջ 48:

հայ լինելու մասին, մեծ հետաքրքրությամբ է դիտում նաև մայրավանքի թանգարանը: Ռապ Շուժան, որի երևակայության մեջ Ս. Ղազարը պատկերանում է «իբր դարերու ծովուն մեջեն բարձրացող լուսաշող փարոս»⁸⁶, անջնջելի տպավորություններով է հեռանում կղզուց:

1989-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում հրատարակվող «Հայկական ուսումնասիրությունների միության հանդեսում» (ամենամյա հրատարակություն, լույս է տեսնում 1984-ից անգլերեն) տպագրվել է XX դ. անգլիացի մեծ հայագետ, Բրիտանական ակադեմիայի անդամ, Բրիտանական արքայական ասիական ընկերության անդամ, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Չարլզ Ջեյմս Ֆրանկ Դաուսեթի (1924–1998) «Խենթը նորեն եկավ». Բայրոնը և հայերենը» ծավալուն հոդվածը, որը հեղինակը նվիրել է լորդ Բայրոնի ծննդյան 200-ամյակին⁸⁷: Այս աշխատանքը, թերևս, Եվրոպայում կատարված հայագիտական ամենախոր ուսումնասիրություններից մեկն է: Հեղինակը որպես իր աշխատության վերնագիր ընտրել է Բայրոնի հայերենի ուսուցիչ, իսկ հետագայում նաև նրա երկրպագու Հարություն Ավգերյանի խոսքերը՝ «Խենթը նորեն եկավ», որոնք արտասանել էր՝ դիմելով վանականներին, երբ Բայրոնը, Վենետիկի Ս. Ղազար կղզի իր առաջին այցի ժամանակ Մխիթարյան միաբանության մայրավանքի գրադարանում տեսնելով բազմաթիվ հայկական ձեռագիր մատյաններ (այդ թվում՝ IX դարում կազմված վաղ միջնադարյան մանրանկարչության գլուխգործոց «Մլքե թագուհու ավետարանը»), հայերեն գրքեր և մանրանկարներ, գերվել է հայ արվեստով ու պոեզիայով և հաջորդ առավոտյան կրկին վերադարձել Մխիթարյան մայրավանք՝ հայոց լեզուն սովորելու անխոնջ ցանկությամբ տոգորված: Չնայած թե՛ մինչ Բայրոնը, թե՛ նրանից հետո անգլիացի որոշ բանաստեղծներ [Ջեֆրի Չոսեր (1340–1400), Ջոն Գաուեր (1330–1408), Քրիստոֆեր Մառլո (1563–1593), Ջոն Միլթոն (1608–1674), Վիլյամ Ուոթսոն (1858–1935) և ուրիշներ] որոշակի գաղափար ունեցել են Հայաստանի մասին ու հետաքրքրվել վերջինով, «սակայն,– ինչպես նշում է Չ. Դաուսեթը,– ոչ ոք այդքան լիովին խորամուխ չի եղել հայ մշակույթի մեջ, այն էլ ընդամենը երեք կամ չորս ամսվա ընթացքում, որքան Բայրոնը: Այսպիսի համարձակ ձեռնարկման համար ո՞հ է մեկը պատրաստ չէր»⁸⁸:

Իսկ ի՞նչն է ստիպել Բայրոնին այցելել Ս. Ղազար կղզի, առավել ևս այն ժամանակ, երբ այնտեղ գնալը կապված էր որոշակի դժվարությունների հետ (ծովախորշի վրա նստած մառախուղի ցրման ժամկետները ճշտելու համար անհրաժեշտ էր քաջատեղյակ լինել եղանակի փոփոխությունների ժամանակացույցին, վարձել մասնավոր մակույկ և այլն), և պատահական մարդիկ գրեթե չէին այցելում կղզի: Այդ իսկ պատճառով էլ Չ. Դաուսեթը համոզված է, որ մինչև Ս. Ղազար կղզի այցելելը «Բայրոնն արդեն որոշ բան իմացել է հայերի մասին», քանի որ այդ մասին նա պետք է որ կարդացած լիներ Քաստելանի աշ-

⁸⁶ Նույն տեղում, էջ 49:

⁸⁷ C h. D o w s e t t. “The Madman has Come Back again!” Byron and Armenian: In Commemoration of the 200th Anniversary of Lord Byron’s Birth.– “Journal of Society for Armenian Studies (JSAS)”, vol. 4, 1988-1989, pp. 7-52.

⁸⁸ Նույն տեղում, էջ 7:

խատության էջերում, որ նա ձեռք էր բերել դրանից երեք տարի առաջ⁸⁹: Բացի այդ, ինչպես նշում է Չ. Դաուսեթը, «Բայրոնը հայերի մասին՝ Վենետիկի հետ առնչված, լսել է շատ ավելի վաղ, հենց իր լինելիության ձևավորման փուլում», քանի որ այն «գրքերից մեկը, որ խորապես ազդել է պատանի Բայրոնի վրա, իր իսկ հավաստմամբ, եղել է Շիլլերի «Ոգետեսը», որն Ու. Ռենդերի թարգմանությամբ անգլերեն լույս է տեսել Լոնդոնում 1800-ին «Հայր կամ մարգարեն» վերնագրով, երբ բանաստեղծը տասներկու տարեկան էր»⁹⁰: Մեր կարծիքով, միանգամայն իրավացի է անգլիացի հայագետը, պնդելով, որ Բայրոնը Ս. Ղազար է այցելել ոչ միայն որպես սովորական զբոսաշրջիկ, ինչպես մյուս ճանապարհորդները, այլ նաև այն պատճառով, որ «նա այժմ լավ հնարավորություն ուներ իրականության մեջ դեմադրել հանդիպելու Շիլլերի հորինած և իրեն հանգիստ չսովող արարածին, որն այժմ աշխարհիկ էր ու հասանելի: Բացի Շիլլերի «Հայր» գրքի հնարավոր ազդեցությունից, հայերի հանդեպ Բայրոնի ունեցած հետաքրքրության վրա ուրիշ ոչ մի արտակարգ, օտարոտի ազդեցություն չի եղել...»⁹¹:

Այնուհետև Չ. Դաուսեթը իր աշխատության մեջ անդրադառնում է Բայրոնի Ս. Ղազար կղզում հայերեն սովորելուն, Մխիթարյանների և Բայրոնի առնչություններին, Յու. Վեսելովսկու գրական ակնարկներին, Խ. Դաշտենցի «Բայրոնը և հայերը» գրքին, Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, ինչպես նաև կատարում բազմաթիվ մեջբերումներ Բայրոնի նամականուց և Հ. Ավգերյանի «Ինքնապատում օրագրութեան»-ից: Այս հարցերին տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր առիթներով անդրադարձել են բազմաթիվ հայ ու օտարագրի հեղինակներ, որոնց մեկնաբանությունները և եզրահանգումները գրեթե նույնանման են: Թվում էր, թե ամեն ինչ մանրագին ուսումնասիրված է և, բացի հրատարակված աշխատանքները քննարկելուց, վերլուծելուց և ընդհանուր հետևություններից, նոր փաստեր արձանագրել հնարավոր չէ: Մակայն հայ գրական մտքին քաջատեղյակ անգլիացի հայագետը դրանք ուսումնասիրում է ոչ միայն իրեն հատուկ խորությամբ, նորովի ու բարեխղճությամբ, այլև կատարելով տքնաջան պրպտումներ և հետազոտություններ Անգլիայի պետական ու մասնավոր գրական արխիվներում, հիմնադրամներում և տարբեր հավաքածուներում հայտնաբերում է մինչ այժմ չհրատարակված, հայ և օտարագրի բայրոնագետներին անհայտ նոր փաստեր ու տեղեկություններ, որոնք վերաբերում են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին: Այսպես, պարզվում է, որ «Ջոն Մըրրեյ ՄՊԸ-ի սեփականությունն է Բայրոնի և Ավգերյանի կողմից կազմված հայերեն տառերի մի ցուցակ՝ իրենց անգլերեն, լատիներեն, ֆրանսերեն և արդի հունարեն մոտավոր համարժեքների հետ մեկտեղ»⁹²: Այստեղ Բայրոնի ավանդն այն է, որ նա, մի տառի պատկերման համար միաժամանակ օգտագործելով մի քանի հնչյունաբանական նշաններ, հայերեն տառե-

⁸⁹ Նույն տեղում, էջ 10:

⁹⁰ Նույն տեղում, էջ 11:

⁹¹ Նույն տեղում, էջ 12:

⁹² Նույն տեղում, էջ 17:

րի անվանումներն անգլերեն տառադարձմամբ գրել է այնպես, ինչպես արտասանել է Ավգերյանը: Չ. Դաուսեթը կարծում է, որ դա, հավանաբար, ուղարկվել է Ջ. Մըրրեյին որպես մի նմուշ պատրաստվող «Հայերեն-անգլերեն քերականությունից»: Տառերի այս ցուցակը, հավանաբար, կցված է եղել նույնպես Ջոն Մըրրեյ ՄՊԸ-ի սեփականություն հանդիսացող և վերոհիշյալ քերականության հետ առնչվող մեկ այլ փաստաթղթի, որտեղ Բայրոնը համառոտ շարադրել է հայոց ձեռագիր մատյանների պատմությունը: Չ. Դաուսեթն իր աշխատանքում կատարում է նաև ընդարձակ մեջբերում հիշյալ փաստաթղթից, որը գրվել է Բայրոնի ձեռքով: Ահա մի փոքրիկ հատված այդ մեջբերումից. «Վոալճապուհի թագավորության օրոք, չորրորդ դարում, մի ուսյալ հայ, Մեսրոպ Մաշտոց անվամբ, ստեղծեց 36 տառից բաղկացած հայոց այբուբենը: Մինչ այդ հայերն օգտագործել են ասորական, պարսկական կամ հունական տառեր: Մեսրոպը ստեղծեց Այբ-ից մինչև Քե տառերը: XII դարում գործածության մեջ մտան ևս երկու տառ՝ Օ-ն և Ֆ-ն: ...Հայերն իրենց անվանում են հայկական ազգ՝ իրենց երկրի առաջին թագավորի անվամբ»⁹³: Անհրաժեշտ է նշել, որ Ջոն Մըրրեյ ՄՊԸ-ում պահվող այդ երկու փաստաթղթերի մասին մինչև Չ. Դաուսեթը թե՛ հայ, թե՛ օտարազգի հեղինակների կողմից մատուցվում ոչ մի հիշատակում չի եղել: Ինչպես հայտնի է, Բայրոնը 1817-ի հունվարի 2-ին Ջ. Մըրրեյին ուղղված նամակում գրում է, որ նրան է ուղարկում «մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականությունից՝ հայերի օգտագործման համար, որի հրատարակմանը նա «խթանել և աջակցել» է⁹⁴: Հետաքրքրական է, որ «այդ թերթերը դեռ պահպանվում են Ջոն Մըրրեյ ՄՊԸ-ի արխիվում, 17-րդ էջի վրա կա Բայրոնի մակագրությունը. «Այս քերականությունը հայերի, և ոչ թե մեր ժողովրդի, օգտագործման համար է՝ անգլերենին տիրապետելու համար»⁹⁵: Այնուհետև Չ. Դաուսեթը մանրագնին քննարկում է քերականության ձեռնարկների պատրաստման գործում Բայրոնի և Ավգերյանի կատարած համատեղ աշխատանքին, Բայրոնի հայերեն սովորելուն, հայերեն-անգլերեն քերականության համար նրա գրած առաջաբանին, նրա հայերենից կատարած թարգմանություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև կատարում մեջբերումներ Բայրոնի նամակներից ու նշված առաջաբանից:

Ինչպես բազմիցս նշվել է, Բայրոնի վրա խոր տպավորություն է թողել հայ մշակույթը: Սակայն միշտ ենթադրվել է, որ բանաստեղծն իր «հայկական» ուսումնասիրությունների շրջանակներում սահմանափակվել է միայն հայ հնագույն և միջնադարյան գրողների ստեղծագործություններով, չնայած պետք էր ակնկալել, որ նա հետաքրքրվել է նաև ժամանակակից հայ պոեզիայով, քանի որ Ավգերյանի «Բնքնապատում օրագրության» մեջ կատարված գրառումներից իրազեկ ենք դառնում, որ Բայրոնը խնդրել է Ավգերյանին իրեն տեղեկություններ հայտնել ինչպես ժամանակակից, այնպես էլ հնագույն հայ բանաստեղծությունների վերաբերյալ: «Այնուամենայնիվ, մինչև վերջերս, – ինչպես հիշա-

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ T. H. Moore. Նշվ. աշխ., էջ 330:

⁹⁵ Ch. Dowsett. Նշվ. աշխ., էջ 24:

տակում է Չ. Դաուսեթը, – ոչ մի ապացույց չկար, որ Բայրոնը հայ ժամանակակից որևէ ստեղծագործություն է թարգմանել: Այսուհանդերձ, Օքսֆորդի համալսարանի հրատարակչության կողմից Բայրոնի «Չափածո ստեղծագործությունների լիակատար ժողովածուի» ընթացիկ հրատարակման կապակցությամբ, 1976-ին, պրոֆեսոր Մաք Գաննը, Լոնդոնի Ջոն Մըրրեյ ՄՊԸ-ում Բայրոնի արխիվը զննելիս, պատահաբար հանդիպեց մի ձեռագիր փաստաթղթի՝ վերնագրված «Թարգմանություն հայերենից: Բյուզանդյան ամառանոցի զվարճալիքները», և հարցուփորձ արեց, թե արդյոք որևէ մեկը կարո՞ղ է ներկայացնել հայերեն բնագիրը»⁹⁶: Բարեբախտաբար, որոշ ժամանակ անց, Փարիզի Ալբոնի հրապարակի վրա գտնվող Հայկական գրադարանում գտնվեց աշխարհագրագետ, պատմաբան, բանասեր Ղ. Ինճիճյանի մի պոեմը՝ «Ամարանոց Բիզանդեան ի նեղուցին Կոստանդնուպոլսոյ կոչեցեալ ի տաճկաց Պօղագ Իչի», որի վերնագիրը անգլերեն թարգմանված էր հետևյալ կերպ. “The Byzantine Summer-House in the Straits of Constantinople, called by the Turks Boğaz Ici (The Golden Horn)”⁹⁷: Բայրոնը թարգմանել է այդ պոեմից ընդամենը 4-5 էջ (253 էջից)՝ նախերգանքը, որը պարունակում է հինգ տուն, և տասնյոթ տուն (6-ից մինչև 22) առաջին երգից, որը բաղկացած է յոթանասուն տնից՝ համարակալված 6-ից 75: Այնուհետև Չ. Դաուսեթը մեջբերում է Ղ. Ինճիճյանի պոեմի վերոնշյալ հատվածները, դրանց անգլերեն թարգմանությունը՝ կատարված Բայրոնի կողմից, և մանրամասնորեն, տուն առ տուն համեմատելով, վերլուծում է թարգմանության որակը: Չ. Դաուսեթը իրավացիորեն նշում է, որ «Պոեմի թարգմանությունը հեշտ չէ. բառապաշարը հարուստ է, ոճը և քերականությունը՝ բարդ...»⁹⁸, իսկ Բայրոնը, հայերեն սովորելու համար «հատկացնելով շատ կարճ ժամանակ», բնական է և «հավաստի, որ նա չէր կարող ձեռք բերած լինել լեզվական խոր գիտելիքներ իրենց բոլոր բարդություններով հանդերձ»⁹⁹: Չնայած դրան՝ Բայրոնի թարգմանությունը նրբագեղ է և ընդհանուր առմամբ ճշգրիտ: Դա հետևանք է այն փաստի և իրողության, քանի որ «Բայրոնն այն անձնավորությունը չէր, որ գոհանար բանասիրական մանրուքներով ու կարկատաններով: Նա խորամուխ էր լինում ընդհուպ մինչև նյութի սիրտն ու հոգին...»¹⁰⁰: Անգլիացի հայագետի մասին մեր խոսքը նպատակահարմար ենք գտնում ավարտել իր իսկ աշխատանքի հիմնական մասի վերջում կատարած հարցադրմամբ. «...ես կցանկանայի հարցնել հայերին, թե քանի՞ համաշխարհային ճանաչում ունեցող հանճար է այսպես տարված հետազոտել Մեսրոպյան տառերը: Իսկապես, միայն Խենթը»¹⁰¹:

⁹⁶ Նույն տեղում, էջ 33:

⁹⁷ Նույն տեղում, էջ 35, 39:

⁹⁸ Նույն տեղում, էջ 42:

⁹⁹ Նույն տեղում, էջ 47:

¹⁰⁰ Նույն տեղում:

¹⁰¹ Նույն տեղում:

Այսպիսով՝ XIX դ. հայ գրական-հասարակական կյանքին վերաբերող իրենց աշխատություններում օտարազգի հեղինակներն ավելի շատ անդրադարձել են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին, քան որևէ այլ խնդրի: Դա միանգամայն բնական է, հասկանալի և բացատրելի, քանի որ, նախ, չնայած «Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականությունը, բայց ոչ մի տեղ չկարողացան հավասարվել Վենետիկի հայ կրոնավորներին, որոնք երկար ժամանակ անհաղթելի և անկույտ տիտանների նման էին երևում ազգի աչքին»¹⁰²: Երկրորդ, օտարազգի գրողներից Բայրոնն է ամենից շատ անձնական առնչություն ունեցել հայ իրականության՝ Մխիթարյանների հետ, հիացել նրանց ազգանվեր աշխատանքով, ինչպես նաև ուսումնասիրել հայոց լեզուն ու հայ մշակույթը: Եվ վերջապես, ինչպես իր գրույցներում նշում է փառքի գազարձակետին հասած և Բայրոնի հախուռն քնարերգությամբ ոգևորված գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեն, «Նա մեծ տաղանդ է: Իմ կարծիքով ոչ ոք չունի բանաստեղծական այն ուժը, ինչպիսին որ նա ունի: Արտաքին աշխարհը ճշմարիտ ընկալելու, անցյալը պարզորոշ թափանցելու իր կարողությամբ նա մեծ է, ինչպես Շեքսպիրը»¹⁰³:

ИНОСТРАННЫЕ АВТОРЫ О СВЯЗЯХ БАЙРОНА И МХИТАРИСТОВ

АНАИТ БЕКАРЯН

Р е з ю м е

Арменоведческие исследования Байрона, его связи с мхитаристами нашли свое отражение не только в работах мхитаристов и других армянских литературоведов, но и в работах соотечественников поэта и многих иностранных авторов, причем не только в научной, но и в художественной литературе (Дж. Джефферсон, А. и Ю. Веселовские, А. Моруа, А. Виноградов, И. Уолэс, Д. Ланг, Р. Керзон, Л. Марчанд, Ч. Даусет и др.).

FOREIGN AUTHORS ON THE LINKS BETWEEN BYRON AND THE MEKHITARISTS

АНАИТ БЕКАРЯН

S u m m a r y

The Armenian studies on Byron and his links with the Mekhitarists were touched upon not only by the Mekhitarists and Armenian literary critics but also by the poet's compatriots and foreign authors both in academic literature and fiction (J. Jeaffreson, A. Veselovski and Y. Veselovski, A. Maurois, A. Vinogradov, I. Wallace, D. Lang, R. Curzon, L. Marchand, Ch. Dowsett, etc.).

¹⁰² Լ. և Ն. Երկերի ժողովածու, տասը հատորով, հ. 5, Երևան, 1986, էջ 360:

¹⁰³ Էքերման. Ջրույցներ Գյոթեի հետ. նրա կյանքի վերջին տարիներին. 1823-1832, Երևան, 1975, էջ 118: